

ԱՐՄԲՐՈԿ ԲԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ

2024 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական հաշվետվություններ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն.....	1
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	3
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն.....	4

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Հաշվետու ընկերությունը.....	5
2. Պատրաստման հիմունքներ.....	6
3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ.....	6
4. Կարևոր հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ	14
5. Չուտ տոկոսային եկամուտ.....	15
6. Միջնորդավճարների և այլ վճարների գծով եկամուտ և ծախս.....	15
7. Առևտրային գործառնություններից զուտ օգուտ	15
8. Անձնակազմի գծով ծախսեր	16
9. Վարչական ծախսեր.....	16
10. Շահութահարկ	16
11. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	17
12. Հակադարձ հետգնման պայմանագրերով ստացման ենթակա միջոցներ	18
13. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	18
14. Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	19
15. Ներդրումներ ասոցիացված ընկերությունում և համատեղ ձեռնարկություններում.....	20
16. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ.....	21
17. Վարձակալություն	22
18. Այլ ակտիվներ	23
19. Սեփական կապիտալ	24
20. Հետգնման պայմանագրերով վճարման ենթակա գումարներ	25
21. Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նկատմամբ.....	25
22. Պարտավորություններ վերջնահաշվարկ չանցած գործարքների մասով	25
23. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր.....	26
24. Ռիսկերի կառավարում.....	26
25. Իրական արժեքի չափում.....	31
26. Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության վերլուծություն	33
27. Կապիտալի կառավարում.....	34
28. Պայմանական պարտավորություններ	34
29. Կապակցված կողմեր	35

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Արմբրոկ» ԲԲԸ բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Արմբրոկ» ԲԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ Էական տեղեկատվությունը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր Էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Եթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀԷՄՍԽ) կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի Եթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության Միջազգային Ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք), ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում կիրառելի Եթիկայի այն պահանջների, որոնք վերաբերում են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտին, և պահպանել ենք Եթիկայի այլ պահանջները՝ համաձայն այս պահանջների և ՀԷՄՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով Էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են Եական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի Եական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են Եական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններին օգտագործողների՝ այս ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- ▶ Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների Եական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած Եական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով Եական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ▶ Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- ▶ Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

- ▶ Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված Էական անորոշություն, որը կարող է Էական կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է Էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Ընկերության գործունեության անընդհատության դադարեցմանը:
- ▶ Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- ▶ Պլանավորում և իրականացում ենք խմբի աուդիտը Ընկերության ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական միավորների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով՝ որպես ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու հիմք: Մենք պատասխանատու ենք աուդիտորական աշխատանքների ուղղորդման, ղեկավարման և վերանայման համար՝ խմբի աուդիտի իրականացման նպատակով: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան

Գլխավոր տնօրեն



Էրիկ Հայրապետյան

Աուդիտի բաժնի գործընկեր




Դմիտրո Յուրգելևիչ

2025թ. ապրիլի 25


Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն**2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

Հազար ՀՀ դրամ	Ծան.	2024թ.	2023թ.
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	5	3,799,829	2,006,438
Տոկոսային ծախս	5	(2,490,602)	(1,807,408)
Չուտ տոկոսային եկամուտ		1,309,227	199,030
Միջնորդավճարների և այլ վճարների գծով եկամուտներ	6	6,087,515	12,602,984
Միջնորդավճարների և այլ վճարների գծով ծախսեր	6	(1,494,080)	(1,685,854)
Չուտ միջնորդավճարների և այլ վճարների գծով եկամուտ		4,593,435	10,917,130
Առևտրային գործառնություններից զուտ օգուտ	7	6,152,261	6,878,758
Չուտ օգուտ/(վնաս) այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների վաճառքից		27,710	(21,887)
Չուտ (վնաս)/օգուտ արտարժույթի վերագնահատումից		(355,407)	611,921
Այլ եկամուտ		128,912	40,539
Անձնակազմի գծով ծախսեր	8	(6,874,526)	(10,879,222)
Վարչական ծախսեր	9	(500,141)	(503,405)
Ասոցիացված ընկերության շահույթի բաժնեմաս	15	97,712	66,329
Համատեղ ձեռնարկության արդյունքների բաժնեմաս	15	(16,359)	(6,474)
Պարտքային կորստի գծով ծախս	24	(38,764)	(162,923)
Շահույթը Նախքան շահութահարկով հարկումը		4,524,060	7,139,796
Շահութահարկի գծով ծախս	10	(864,155)	(1,143,904)
Տարվա շահույթ		3,659,905	5,995,892
Այլ համապարփակ վնաս			
Շահույթում կամ վնասում հետագայում վերադասակարգման ենթակա հոդվածներ՝			
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումների գծով իրական արժեքի օգուտ և ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի փոփոխություն		1,289,505	539,722
Նվազեցում՝ ներդրումների գծով օտարումից կուտակված (օգուտ)/վնասի՝ շահույթում կամ վնասում վերադասակարգումից		(27,710)	21,887
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում շարժի գծով շահութահարկի ազդեցություն		(227,123)	(93,120)
Այլ համապարփակ եկամուտ՝ առանց շահութահարկի		1,034,672	468,489
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ		4,694,577	6,464,381

Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են և ստորագրվել 2025թ. ապրիլի 25-ին:


Արամ Կալֆաջյան
Գլխավոր գործադիր տնօրեն




Լիլիա Թադեոսյան
Գլխավոր հաշվապահ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 5-35 էջերում գտնվող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար ՀՀ դրամ

		2024թ. Ծան. դեկտեմբերի 31	2023թ. դեկտեմբերի 31
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11	5,210,299	6,569,219
Հակադարձ հետգնման պայմանագրերով ստացման ենթակա գումարներ	12	950,334	–
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ			
– Ընկերության կողմից պահվող	13	4,894,628	6,549,058
– Հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված	13	2,502,354	1,504,482
– Ֆինանսական կազմակերպություններից ստացված փոխառությունների դիմաց գրավադրված	13	–	1,903,586
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ			
– Ընկերության կողմից պահվող	14	5,429,814	2,802,376
– Հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված	14	38,003,618	23,882,741
– Ֆինանսական կազմակերպություններից ստացված փոխառությունների դիմաց գրավադրված	14	–	514,833
Ներդրումներ ասոցիացված ընկերությունում	15	308,329	210,617
Ներդրումներ համատեղ ձեռնարկությունում	15	–	16,359
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	16	374,739	245,025
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	17	121,741	142,031
Այլ ակտիվներ	18	582,282	688,608
Ընդամենը ակտիվներ		58,378,138	45,028,935
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	19	267,150	267,150
Էմիսիոն եկամուտ		208,011	208,011
Գլխավոր պահուստ		79,670	79,670
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով պահուստ		1,450,628	415,956
Զբաղիված շահույթ		13,051,319	9,792,139
Ընդամենը սեփական կապիտալ		15,056,778	10,762,926
Պարտավորություններ			
Հետգնման պայմանագրերով վճարման ենթակա գումարներ	20	37,710,716	23,854,597
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նկատմամբ	21	2,243,443	3,132,345
Պարտավորություններ վերջնահաշվարկ չանցած գործարքների մասով	22	855,247	3,930,608
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություններ		52,027	914,914
Վարձակալության գծով պարտավորություններ	17	150,711	132,155
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	23	1,949,810	2,265,301
Պահուստներ		–	27,677
Հետաձգված հարկային պարտավորություններ	10	359,406	8,412
Ընդամենը պարտավորություններ		43,321,360	34,266,009
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		58,378,138	45,028,935

Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են և ստորագրվել 2025թ. ապրիլի 25-ին:

Արամ Կալֆաջյան
Գլխավոր գործադիր տնօրենԼիդա Թադևոսյան
Գլխավոր հաշվապահ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների պահուստ	Զբաղիված շահույթ	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	267,150	208,011	79,670	(52,533)	4,063,397	4,565,695
Տարվա շահույթ	-	-	-	-	5,995,892	5,995,892
Տարվա այլ համապարփակ եկամուտ						
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի գույք փոփոխություն և ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի փոփոխություն, հարկումից հետո	-	-	-	468,489	-	468,489
Ընդամենը տարվա այլ համապարփակ եկամուտ	-	-	-	468,489	5,995,892	6,464,381
Հայտարարված շահաբաժիններ (Ծան. 19)	-	-	-	-	(267,150)	(267,150)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	267,150	208,011	79,670	415,956	9,792,139	10,762,926
Տարվա շահույթ	-	-	-	-	3,659,905	3,659,905
Տարվա այլ համապարփակ եկամուտ						
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի գույք փոփոխություն և ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի փոփոխություն, հարկումից հետո	-	-	-	1,034,672	-	1,034,672
Ընդամենը տարվա այլ համապարփակ եկամուտ	-	-	-	1,034,672	3,659,905	4,694,577
Հայտարարված շահաբաժիններ (Ծան. 19)	-	-	-	-	(400,725)	(400,725)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	267,150	208,011	79,670	1,450,628	13,051,319	15,056,778

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 5-35 էջերում գետեղված ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն**2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

Հազար ՀՀ դրամ

	Ծան.	2024թ.	2023թ.
Գործառնական գործունեություն			
Ստացված տոկոսներ		3,896,658	1,683,516
Վճարված տոկոսներ		(2,459,581)	(1,759,953)
Ստացված միջնորդավճարներ և այլ վճարներ		6,103,541	12,424,796
Վճարված միջնորդավճարներ և այլ վճարներ		(1,620,154)	(1,675,423)
Չուտ իրացված օգուտ առևտրային գործառնություններից		5,466,816	6,059,569
Չուտ օգուտ/(վնաս) արտարժույթի առջուվաճառքի գործարքներից		547,976	300,089
Այլ գործառնական եկամուտ		128,912	40,539
Աշխատավարձ և այլ առնչվող վճարումներ		(7,017,912)	(12,283,615)
Վճարված այլ գործառնական ծախսեր		(427,294)	(434,200)
Գործառնական դրամական հոսքեր նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունը		4,618,962	4,355,318
Շրջանառու կապիտալի փոփոխություններ՝			
Ավանդներ		–	6,189
Հակադարձ հետգնման պայմանագրեր		(935,164)	995,604
Ներդրումային արժեթղթեր		(12,559,093)	(23,520,899)
Այլ ակտիվներ		6,692	(87,509)
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նկատմամբ		(707,548)	1,950,428
Հետգնման պայմանագրեր		14,036,409	15,458,779
Պարտավորություններ վերջնահաշվարկ չանցած գործարքների մասով		(3,003,658)	3,627,306
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր		(139,375)	89,999
Գործառնական դրամական հոսքեր նախքան շահույթահարկով հարկումը		1,317,225	2,875,215
Վճարված շահույթահարկ		(1,603,171)	(761,892)
Գործառնական գործունեության մեջ (օգտագործված)/գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր		(285,946)	2,113,323
Ներդրումային գործունեություն			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(120,885)	(156,302)
Հիմնական միջոցների վաճառք		6,000	–
Չուտ դրամական միջոցների հոսքեր՝ օգտագործված ներդրումային գործունեությունում		(114,885)	(156,302)
Ֆինանսավորման գործունեություն			
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	17	–	(34,000)
Վճարված շահաբաժիններ	19	(400,725)	(267,150)
Ֆինանսավորման գործունեության մեջ օգտագործված զուտ դրամական միջոցների հոսքեր		(400,725)	(301,150)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		(801,556)	1,655,871
Արտարժույթի փոխարժեքի զուտ տարբերության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(552,985)	304,809
Արժեզրկման կորուստների գծով պահուստ		(4,379)	1,745
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հունվարի 1-ի դրությամբ		6,569,219	4,606,794
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ դեկտեմբերի 31-ի դրությամբ	11	5,210,299	6,569,219

Դրամական հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 5-35 էջերում զետեղված ծանոթագրությունների հետ մեկտեղ:

(հազար ՀՀ դրամ)

1. Հաշվետու ընկերությունը**ա) Գործունեությունը**

«Արմբրոկ» ԲԲԸ (այսուհետ «Ընկերություն») ներդրումային ընկերություն է, որի գործունեությունը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ: Ընկերությունը գրանցվել է 2008 թվականի նոյեմբերի 4-ին՝ ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից և ստացել թիվ 10 լիցենզիան: «Արմբրոկ» ԲԲԸ-ն հանդիսանում է բաց բաժնետիրական ընկերություն՝ Հայաստանի Հանրապետության Զաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Ընկերության վերաբերենդավորման արդյունքում նախկինում օգտագործված «Արմենբրոկ» ԲԲԸ անվանումը փոխարինվել է «Արմբրոկ» ԲԲԸ անվանմամբ: 2025 թվականի մարտին Fitch Ratings միջազգային վարկանշային գործակալությունը Ընկերությանը շնորհել է երկարաժամկետ թողարկողի դեֆոլտի «B-» վարկանիշ կայուն հեռանկարով, ինչպես նաև կարճաժամկետ թողարկողի դեֆոլտի «B» վարկանիշ:

Ընկերության խոշոր բաժնետերերն է հանդիսանում Արամ Կայֆաջյանը, ում պատկանում է թողարկված բաժնետոմսերի 43.07%: Ընկերությունը չունի վերջնական վերահսկող կողմ:

Ընկերությունը գործունեություն է իրականացնում արժեթղթերի և արտարժույթի շուկաներում, մասնավորապես՝

- ▶ Իրականացնում է արժեթղթերի տեղաբաշխում,
- ▶ Իրականացնում է արժեթղթերի հավատարմագրային կառավարում,
- ▶ Հանդիսանում է արժեթղթերի բրոքեր և դիլեր,
- ▶ Մատուցում է ռեեստրավարման, պահառության և դեպոզիտար ծառայություններ,
- ▶ Տրամադրում է խորհրդատվություն արժեթղթերի շուկայի վերաբերյալ,
- ▶ Իրականացնում է արտարժույթի անկանխիկ առուվաճառքի գործառնություններ:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, 0010, Երևան, Հանրապետության փողոց 39:

բ) Գործարար միջավայրը Հայաստանում

Ընկերությունն իր հիմնական գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում: Հետևաբար, այն ենթակա է Հայաստանի տնտեսական և ֆինանսական շուկաների ազդեցությանը, որոնք ունեն զարգացող շուկաներին բնորոշ հատկանիշներ: Իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերը, ինչպես նաև բիզնեսի ընդհանուր վարքագիծը շարունակաբար զարգանում և բարելավվում են: Այնուամենայնիվ, օրենսդրության տարբեր մեկնաբանությունները և հաճախակի փոփոխությունները, ինչպես նաև այլ իրավական խոչընդոտները շարունակում են դժվարություններ ստեղծել Հայաստանում գործող ընկերությունների համար:

Ուկրաինայի պատերազմի արդյունքում բազմաթիվ առաջատար երկրներ և տնտեսական միություններ հայտարարել են խիստ տնտեսական պատժամիջոցներ Ռուսաստանի և Բելառուսի, ռուսական բանկերի, այլ կազմակերպությունների և անհատների նկատմամբ: Պատերազմի սկզբից ի վեր ռուսական ռուբլու զգալի անկայունություն է նկատվել արտարժույթների նկատմամբ, ինչպես նաև նկատվել է Ռուսաստանի և արտասահմանյան արժեթղթերի շուկաներում ցուցակված ռուսական ընկերությունների թողարկած արժեթղթերի արժեքի զգալի անկում: Վերոնշյալ հանգամանքների արդյունքում արձանագրվել է ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց ներհոսք և մի շարք ընկերությունների տեղափոխում (հատկապես Ռուսաստանից) Հայաստան՝ ինչը, ընդհանուր առմամբ, դրական նշանակալի դերակատարություն է ունեցել Հայաստանի տնտեսության խթանման հարցում: Զանի որ պատերազմը դեռ շարունակվում է, անհնար է արժանահավատորեն գնահատել այն վերջնական ազդեցությունը, որը այն կարող է թողնել Ընկերության բիզնեսի վրա, տնտեսության վրա ազդեցության մեծության անորոշության պատճառով:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության վերաբերյալ ղեկավարության գնահատականը: Այսպես գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

(հազար ՀՀ դրամ)

2. Պատրաստման հիմունքներ**ա) Համապատասխանության մասին հայտարարություն**

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվություններին միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն՝ թողարկված Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

բ) Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է ՀՀ դրամը, որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական և ներկայացման արժույթը, որով էլ ներկայացված են սույն ֆինանսական հաշվետվությունները: Բոլոր ֆինանսական տվյալները կլորացված են հազար դրամի չափով, եթե այլ բան նշված չէ:

գ) Հափման հիմունքներ

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են սկզբնական արժեքի հիման վրա, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք չափվում են իրական արժեքով:

դ) Վերադասակարգումներ

Որոշակի վերադասակարգումներ են կատարվել նախորդ տարվա ֆինանսական հաշվետվություններում՝ ընթացիկ տարվա ներկայացմանը համապատասխանեցնելու նպատակով: Այս վերադասակարգումները որևէ ազդեցություն չեն ունեցել նախկինում ներկայացված զուտ շահույթի կամ սեփական կապիտալի մեծությունների վրա:

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների դրամական հոսքերի մասին հաշվետվությունում որոշ գումարներ վերադասակարգվել են:

	Նախկինում ներկայացված	Վերադասա- կարգում	Վերադասա- կարգված
2023 իրացված օգուտ առևտրային գործառնականություններից	–	6,059,569	6,059,569
Գործառնական դրամական միջոցների հոսքեր նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները			
Շրջանառու կապիտալի փոփոխություններ ներդրումային արժեթղթերում	(17,461,330)	(6,059,569)	(23,520,899)
2023 իրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից	(17,461,330)	–	(17,461,330)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ**ա) Իրական արժեքի չափում**

Ընկերությունը իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքը չափում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Այն ակտիվների և պարտավորությունների համար, որոնք ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում են իրական արժեքով շարունակական հիմունքով, Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում որոշում է, թե արդյոք տեղաշարժեր են տեղի ունեցել հիերարխիայի մակարդակների միջև՝ վերանայելով դասակարգումը (հիմնվելով ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք նշանակալի են իրական արժեքի գնահատման համար):

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ (շարունակություն)**բ) Արտարժույթով գործարքներ**

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային միավորները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը:

	2024թ. դեկտեմբերի 31	2023թ. դեկտեմբերի 31
ՀՀ դրամ / 1 ԱՄՆ դոլար	396.56	404.79
ՀՀ դրամ / 1 եվրո	413.89	447.9
ՀՀ դրամ / 1 ռուբլի	3.71	4.5

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային միավորների փոխարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում «Չուտ օգուտ/(վնաս) արտարժույթի վերագնահատումից» հոդվածում:

գ) Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ դասակարգվում են որպես հետագայում ամորտիզացված արժեքով, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով և շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ընկերության՝ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները ներառում են այլ ֆինանսական ակտիվները, ինչպես նաև դրամական միջոցները և դրանց համարժեքները:

Ֆինանսական ակտիվների՝ կանոնավոր կերպով գնումը կամ վաճառքը պետք է ճանաչվի կամ ապաճանաչվի՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Կանոնավոր կերպով գնումը կամ վաճառքը ֆինանսական ակտիվի գնում կամ վաճառք են, որի դրույթները պահանջում են այդ ակտիվի հանձնումը տվյալ շուկայում սովորական կանոններով կամ ընդունված կարգով սահմանված ժամկետում: Բոլոր ճանաչված ֆինանսական ակտիվները այնուհետև չափվում են կամ ամորտիզացված արժեքով, կամ իրական արժեքով՝ կախված ֆինանսական ակտիվների դասակարգումից:

Տոկոսային եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը պարտքային գործիքների համար, որոնք հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով, ինչպես նաև իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով:

Տոկոսային եկամուտը ներառված է «Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ» հոդվածում:

Պարտքային գործիքներ՝ դասակարգված որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող

Ընկերության կողմից պահվող ՀՀ պետական պարտատոմսերը դասակարգվում են որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող: Պետական պարտատոմսերը սկզբնապես չափվում են իրական արժեքով գումարած գործարքի գծով ծախսերը: Հետագայում այդ պետական պարտատոմսերի հաշվեկշռային արժեքի այն փոփոխությունները, որոնք առաջացել են փոխարժեքի գծով օգուտից կամ վնասից (տես ստորև), արժեքը կման գծով օգուտներից կամ կորուստներից և արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամտից, ճանաչվում են շահույթում կամ վնասում: Շահույթում կամ վնասում ճանաչված գումարները համընկնում են այն գումարների հետ, որոնք կճանաչվեին շահույթում կամ վնասում, եթե այդ պետական պարտատոմսերը չափվեին ամորտիզացված արժեքով: Այս պետական պարտատոմսերի հաշվեկշռային արժեքի բոլոր այլ փոփոխությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում և կուտակվում են Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով պահուստ: Այդ պետական պարտատոմսերի ապաճանաչման դեպքում կուտակված շահույթները կամ վնասները, որոնք նախկինում ճանաչվել են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, վերադասակարգվում են շահույթում կամ վնասում «Չուտ օգուտ/(վնաս) այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների վաճառքից» հոդվածում:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ (շարունակություն)**գ) Ֆինանսական գործիքներ (շարունակություն)**

Բաժնային գործիքներ՝ դասակարգված որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող

Սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը կարող է մշտական հիմունքներով (գործիք առ գործիք սկզբունքով) դասակարգել բաժնային գործիքներում ներդրումները որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող: Ընկերությունը չի նախորոշել բաժնային գործիքներում ներդրումները որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող սկզբնական ճանաչման ժամանակ:

Ֆինանսական ակտիվը պահվում է վաճառքի համար, եթե՝

- ▶ այն ձեռք է բերվել հիմնականում տեսանելի ապագայում վաճառքի նպատակով, կամ
- ▶ սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ կառավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- ▶ այն հանդիսանում է ածանցյալ գործիք (բացառությամբ այն ածանցյալ գործիքի, որը հանդիսանում է ֆինանսական երաշխավորության պայմանագիր կամ դասակարգված է և օգտագործվում է որպես հեջավորման գործիք):

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Այն ֆինանսական ակտիվները, որոնք չեն չափվում ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով, չափվում են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով:

Մասնավորապես՝

- ▶ Բաժնային գործիքներում ներդրումները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե միայն Ընկերությունը չի դասակարգում բաժնային գործիքներում ներդրումները, որը չի պահվում վաճառքի կամ բիզնես միավորման արդյունքում առաջացած պայմանական վարձատրության համար, որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող սկզբնական ճանաչման ժամանակ:
- ▶ Պարտքային գործիքները, որոնք չեն համապատասխանում ամորտիզացված արժեքի չափանիշին կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափման չափանիշին, դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող: Ինչպես նաև, պարտքային գործիքները, որոնք համապատասխանում են կամ ամորտիզացված արժեքով չափման համար նախատեսված չափանիշներին, կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափման համար նախատեսված չափանիշներին, կարող են դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող սկզբնական ճանաչման ժամանակ, եթե այսպիսի դասակարգումը վերացնում կամ զգալիորեն նվազեցնում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը («հաշվապահական հաշվառման անհամապատասխանություն»), ինչը կառաջանար ակտիվների կամ պարտավորությունների չափումից կամ տարբեր հիմունքներով այդ ակտիվների կամ պարտավորությունների մասով օգուտի կամ վնասի ճանաչումից:

Բաժնային արժեթղթերը, կորպորատիվ պարտքային արժեթղթերը, ԱՄՆ դոլարով արտահայտված ՀՀ պետական պարտատոմսերը և ֆոնդի փայերում ներդրումները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում՝ ներառելով ողջ օգուտը կամ վնասը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում այն դեպքում, երբ դրանք չեն հանդիսանում հեջային գործիքների մաս: Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ օգուտը կամ վնասը ներառում է ֆինանսական ակտիվի մասով ցանկացած շահաբաժին կամ ստացված տոկոս և ներառվում է «զուտ առևտրային օգուտ» հոդվածում:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ (շարունակություն)**գ) Ֆինանսական գործիքներ (շարունակություն)***Արտարժույթի փոխարկումից օգուտ և վնաս*

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը որոշվում է այդ արտարժույթով և յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ վերագնահատվում է սփոթ փոխարժեքով: Մասնավորապես՝

- ▶ Հեջավորման փոխհարաբերության մաս չհանդիսացող, ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների մասով արտարժույթային տարբերությունները ճանաչվում են շահույթ կամ վնասում՝ «Չուտ օգուտ կամ վնաս արտարժույթի վերագնահատումից» հոդվածում;
- ▶ Հեջավորման փոխհարաբերության մաս չհանդիսացող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային գործիքների մասով պարտքային գործիքի ամորտիզացված արժեքի գծով արտարժույթային տարբերությունները ճանաչվում են շահույթ կամ վնասում՝ «Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից զուտ օգուտ կամ վնաս» հոդվածում: Այլ փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ներդրումների վերականգնման պահուստի այլ համապարփակ եկամտում;
- ▶ Հեջավորման փոխհարաբերության մաս չհանդիսացող, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների մասով արտարժույթային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ «Չուտ օգուտ կամ վնաս արտարժույթի փոխարժեքի վերագնահատումից» հոդվածում; և
- ▶ Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող բաժնային գործիքների մասով փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են «զուտ առևտրային օգուտ» հոդվածում:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ընկերությունը ճանաչում է ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) գծով պահուստները հետևյալ բոլոր պարտքային գործիքների գծով, որոնք չեն պահվում շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով՝

- ▶ Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով, որոնք հանդիսանում են պարտքային գործիքներ
- ▶ Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ և ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական ակտիվների գծով:

Բաժնային գործիքների մասով արժեզրկումից կորուստ չի ճանաչվում:

Ընկերությունը չափում է կորուստի գծով պահուստը 12-ամսյա ԱՊԿ համարժեք գումարով պարտքային ներդրումային արժեթղթերի և դրամական միջոցների և դրանց համարժեքների համար, քանի որ այդ մնացորդները որոշվել են որպես ցածր պարտքային ռիսկ ունեցող հաշվետու ամսաթվի դրությամբ:

12-ամսյա ԱՊԿ-ն հանդիսանում է այնպիսի ԱՊԿ մաս, որը հաշվետու ժամանակաշրջանից հետո 12 ամսվա ընթացքում կարող է հանգեցնել ֆինանսական գործիքի հավանական դեֆոլտային իրադարձությունների: Այն ֆինանսական գործիքները, որոնց մասով ճանաչվել է 12-ամսյա ԱՊԿ, համարվում են փուլ 1-ում գտնվող ֆինանսական գործիքներ:

Ամբողջ ժամկետում ԱՊԿ առաջանում է ֆինանսական գործիքի ամբողջ ժամանակահատվածում բոլոր հնարավոր դեֆոլտային իրադարձություններից: Այն ֆինանսական գործիքները, որոնց մասով ճանաչվել է ամբողջ ժամկետում ԱՊԿ, համարվում են փուլ 2-ում գտնվող ֆինանսական գործիքներ: Փուլ 2-ում գտնվող ֆինանսական գործիքները սկզբնական ճանաչումից ի վեր պարտքային ռիսկի նշանակալի աճ գրանցած, բայց պարտքային առումով չարժեզրկված գործիքներ են:

Այն ֆինանսական գործիքները, որոնց մասով ճանաչվել է ամբողջ ժամկետում ԱՊԿ և պարտքային առումով արժեզրկված են, համարվում են փուլ 3-ում գտնվող ֆինանսական գործիքներ:

Ընկերությունը չունի փուլ 2-ում և փուլ 3-ում դասակարգված ֆինանսական ակտիվներ:

Ակնկալվող պարտքային կորուստները պարտքային կորուստների հավանականությամբ կշռված գնահատականն են: Ֆինանսական ակտիվները, որոնք պարտքային առումով արժեզրկված չեն հաշվետու ամսաթվի դրությամբ, չափվում են որպես բոլոր դրամական պակասորդների ներկա արժեք (դրամական պակասորդը պայմանագրին համապատասխան Ընկերությանը հասանելի դրամական հոսքերի և Ընկերության կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունն է):

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ (շարունակություն)**գ) Ֆինանսական գործիքներ (շարունակություն)**

Այլ ֆինանսական ակտիվների համար Ընկերությունը կիրառում է ԱՊԿ հաշվարկի պարզեցված մոտեցում: Հետևաբար, Ընկերությունը չի հետևում պարտքային ռիսկի փոփոխություններին, սակայն ճանաչում է կորուստի գծով պահուստ ամբողջ ժամկետում ԱՊԿ հիման վրա յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

ԱՊԿ գծով պահուստը ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ՝

- ▶ Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ և այլ ֆինանսական ակտիվներ – որպես ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից նվազեցում;
- ▶ Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային գործիքներ – ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կորուստի գծով պահուստ չի ճանաչվում, քանի որ այս ակտիվների հաշվեկշռային արժեքը հանդիսանում է դրանց իրական արժեքը: Այնուամենայնիվ, կորուստի գծով պահուստը բացահայտվում և ճանաչվում է իրական արժեքի պահուստում:

Դուրսգրման քաղաքականություն

Ընկերությունը դուրս է գրում ֆինանսական ակտիվը, երբ առկա է տեղեկատվություն այն մասին, որ պարտապանը գտնվում է ծանր ֆինանսական վիճակում և գոյություն չունի վճարման պարտավորությունների կատարման իրատեսական հեռանկար, այսինքն, երբ պարտապանը սկսել է լուծարման կամ սնանկացման գործընթաց, կամ, առևտրային դեբիտորական պարտքերի դեպքում, երբ գումարը ժամկետանց է ավելի, քան երկու տարի, կախված այն բանից, թե ինչն է տեղի ունեցել ավելի շուտ: Դուրսգրված ֆինանսական ակտիվները դեռևս կարող են ենթակա լինել հարկադիր գործողությունների՝ Ընկերության՝ գումարների հավաքագրման ընթացակարգերի շրջանակում հաշվի առնելով, անհրաժեշտության դեպքում, իրավաբանական խորհրդատվությունը: Ընկերության հարկադիր գործողությունների արդյունքում հավաքագրված գումարները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ

Հետագայում ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները ներառում են հետգնման պայմանագրերով վճարման ենթակա գումարները, ֆինանսական կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նկատմամբ պարտավորությունները, վերջնահաշվարկ չանցած գործարքների մասով պարտավորությունները, վարձակալության գծով պարտավորությունները և այլ ֆինանսական պարտավորությունները:

Ընկերությունը որոշել է, որ վերջնահաշվարկ չանցած գործարքների մասով պարտավորությունները հանդիսանում են ֆինանսական պարտավորություններ, քանի որ Ընկերությունը ունի պայմանագրային պարտավորություն տրամադրել արժեթղթեր (ֆինանսական ակտիվներ) գործընկերներին ստացված կանխավճարների փոխարեն:

Ֆինանսական պարտավորությունների գծով տոկոսային ծախսը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը հետագայում ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների համար և ներառվում է «տոկոսային ծախս» հոդվածում:

դ) Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկություններում

Ասոցիացված ընկերությունը կազմակերպություն է, որի նկատմամբ Ընկերությունը նշանակալի ազդեցություն ունի, և որը ոչ դուստր ընկերություն է, ոչ էլ համատեղ ձեռնարկությունում մասնակցության մասնաբաժին: Նշանակալի ազդեցությունը ներդրումների օբյեկտի ֆինանսական և գործառնական քաղաքականության վերաբերյալ որոշումների կայացմանը մասնակցելու իրավունքն է, բայց ոչ այդ քաղաքականության նկատմամբ վերահսկողությունը կամ համատեղ վերահսկողությունը:

Համատեղ ձեռնարկությունը համատեղ համաձայնագիր է, որի համաձայն կողմերը, որոնք համատեղ վերահսկողություն ունեն համաձայնագրի նկատմամբ, իրավունք ունեն համատեղ համաձայնագրի զուտ ակտիվների նկատմամբ: Համատեղ վերահսկողությունը համաձայնագրի նկատմամբ հսկողության համաձայնեցված տարանջատումն է, որը գոյություն ունի միայն այն ժամանակ, երբ համապատասխան գործունեության մասին որոշումները պահանջում են Կողմերի միաձայն համաձայնությունը, որոնք կիսում են վերահսկողությունը:

Ոչ մի այլ պայմանագրային համաձայնություն չկա, որտեղ նշված լինի, որ ինչպես Ընկերությունը, այնպես էլ «Ինվեսթ ին Էյ Էմ» ՓԲԸ-ի մեկ այլ բաժնետեր բաժնեմաս ունի նրա ակտիվներում, նրանք որոշակի համամասնությամբ պատասխանատվություն չեն կրում նրա պարտավորությունների համար և լրացուցիչ համաձայնություն չկա գործառնական և ռազմավարական կառավարման կոնկրետ բաժանման մասով:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ (շարունակություն)**դ) Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկություններում (շարունակություն)**

Կատարված վերլուծությունը հաստատում է, որ «Ինվեսթ Ին Էյ Էմ» ՓԲԸ-ն հանդիսանում է Ընկերության և մեկ այլ բաժնետիրոջ համատեղ ձեռնարկություն (ծան. 15):

Ասոցիացված ընկերությունում կամ համատեղ ձեռնարկությունում ներդրումները հաշվառվում են բաժնեմասնակցության մեթոդով այն օրվանից, երբ ներդրման օբյեկտը դառնում է ասոցիացված ընկերություն կամ համատեղ ձեռնարկություն: Ասոցիացված ընկերությունում կամ համատեղ ձեռնարկությունում ներդրում ձեռք բերելու դեպքում, եթե ներդրման արժեքը գերազանցում է ճանաչելի ակտիվների և պարտավորությունների իրական արժեքում Ընկերության մասնաբաժինը, ապա այդ տարբերությունը ճանաչվում է որպես գուդվիլ և ներառվում է ներդրման հաշվեկշռային արժեքի մեջ: Ներդրման արժեքի նկատմամբ ճանաչելի ակտիվների և պարտավորությունների գույտ իրական արժեքի՝ Ընկերության մասնաբաժնի ցանկացած ավելացում, ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում սկսած այն օրվանից, երբ ներդրումը ձեռք է բերվել:

ե) Արժեթղթերով գործարքներ և համապատասխան ներդրումային եկամուտ

Դիվիդենդները գործունեությամբ պայմանավորված արժեթղթերով գործարքները հաշվառվում են վերջնահաշվարկի (արժեթղթերի վաճառքի կամ գնման) ամսաթվին: Տոկոսային եկամուտը հաշվառվում է հաշվեգրման սկզբունքով: Շահաբաժինների գծով եկամուտը հաշվառվում է բաժնետոմսերի ձեռքբերման պահին՝ առանց նախորդ շահաբաժնի ստացման իրավունքի սկզբունքի կիրառմամբ: Արժեթղթերը, որոնք իրենցից ներկայացնում են ընկերության կառավարման ներքո գտնվող ֆոնդերի փայեր, հաշվառվում են մեկ փային բաժին ընկնող գույտ ակտիվների հրապարակված կամ գեկուցված արժեքով:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից գույտ օգուտը ներառում է որք իրացված և չիրացված իրական արժեքի փոփոխությունները և արտարժույթի փոխարժեքային տարբերությունները, և, այն դեպքում, երբ կիրառելի է, տոկոսային և շահաբաժիններից եկամուտը, որը ճանաչվում է, երբ հաստատվում է Ընկերության՝ վճարում ստանալու իրավունքը:

Ֆոնդերում պահվող փայերից ստացված օգուտը կամ վնասը արտացոլում է մեկ փայի գծով գույտ ակտիվների արժեքի փոփոխությունները:

Բրոքերային գործունեության շրջանակներում արժեթղթերով իրականացվող գործարքները չեն հաշվառվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ սեփականության հետ կապված ռիսկերը և օգուտները կրում են բրոքերային հաճախորդները:

զ) Միջնորդավճարների և այլ վճարների գծով եկամուտ և ծախս

Ընկերությունը միջնորդավճարների գծով եկամուտ է ստանում իր հաճախորդներին մատուցվող ծառայությունների լայն շրջանակից, ինչպիսիք են բրոքերային և պահառուական ծառայությունները, արժեթղթերի հաշիվների բացումը և սպասարկումը, արժեթղթերի գրանցման և սպասարկման ծառայությունները և այլ նմանատիպ ծառայություններ:

Բրոքերային սպասարկման վճարները և պահառության վճարները հաշվարկվում են հաճախորդի անունից համապատասխան գործարքի կատարման պահին՝ պայմանագրով նախատեսված միջնորդավճարների դրույքաչափերը գործարքի ընդհանուր արժեքի վրա կիրառելու և հաշվարկային հանձնարարականների տրամադրման միջոցով:

Արժեթղթերի հաշվի վարման, արժեթղթերի գրանցման և սպասարկման ծառայությունների գծով վճարները գանձվում են մեկից երեք ամսվա ընթացքում:

Բոլոր դեբիտորական պարտքերը սովորաբար մարվում են համապատասխան ծառայության մատուցումից հետո մեկ ամսվա ընթացքում:

Ընկերության միջնորդավճարների և այլ վճարների գծով ծախսը հիմնականում ներառում է գործակալական միջնորդավճարներ և դեպոզիտարիայի վճարներ: Գործակալական միջնորդավճարները հաշվարկվում են գործակալների կողմից հաճախորդներին մատուցվող ծառայություններից Ընկերության կողմից ստացված եկամտի հիման վրա: Հետևաբար, Ընկերության և գործակալների միջև կնքվում են հանձնման-ընդունման ակտեր, և գործակալների միջնորդավճարները սովորաբար ճանաչվում են եռամսյակային կտրվածքով: Դեպոզիտար ծառայությունների հետ կապված միջնորդավճարների գծով ծախսերը կախված են գրանցված գործարքների ծավալից, ծախսերը սովորաբար ճանաչվում են ամսական կտրվածքով, երբ ծառայությունները ստացվում են:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ (շարունակություն)**Է) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են հանդիսանում բանկերում և քլիրինգային համակարգերում ընթացիկ հաշիվները և կանխիկ դրամը:

ը) Գործառնական հարկեր

Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են տարբեր այլ հարկատեսակներ, որոնց գծով գումարների հաշվարկը կապված է Ընկերության գործունեության հետ: Այս հարկերը ներառվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում որպես գործառնական ծախսերի բաղադրիչ:

թ) Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքով, հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկման բոլոր վնասները: Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Մաշվածությունը, ընդհանուր առմամբ, ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների միավորի յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները, մնացորդային արժեքը և մաշվածության մեթոդը վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում՝ հաշվի առնելով գնահատման ցանկացած փոփոխության ազդեցությունը հեռանկարային հիմունքով:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Ստորև ներկայացվում են հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների նշանակալի տարրերի օգտակար ծառայության գնահատված ժամկետները:

Վարձակալված ակտիվների բարելավումներ	20 տարի
Հեռահաղորդակցման սարքեր և համակարգիչներ	1–5 տարի
Փոխադրամիջոցներ	8 տարի
Այլ	1–8 տարի
Ոչ նյութական ակտիվներ	3–10 տարի

Վարձակալված ակտիվների բարելավումները ամորտիզացվում են վարձակալության ժամկետի և օգտակար ծառայության ժամկետի նվազագույնով, եթե առկա չէ ողջամիտ համոզվածություն այն մասին, որ Ընկերությունը կստանա ակտիվի նկատմամբ սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի վերջում կամ կերկարաձգի վարձակալության ժամկետը:

ժ) Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ

ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման առկա ստանդարտների հետևյալ փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2024թ. հունվարի 1–ին սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար՝

- ▶ Պարտավորությունների դասակարգում ընթացիկ և ոչ ընթացիկ դասերի և կովենանտներ ունեցող ոչ ընթացիկ պարտավորություններ – փոփոխություններ ՀՀՄՍ 1 ստանդարտում,
- ▶ ՀՀՄՍ 16 ստանդարտի փոփոխություններ. Վարձակալության գծով պարտավորություն վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքներում,
- ▶ Բացահայտումներ. Մատակարարների ֆինանսավորման պայմանավորվածություններ – փոփոխություններ ՀՀՄՍ 7 և ՀՀՄՍ 7 ստանդարտներում:

Վերոնշյալ ոչ մի փոփոխություն նշանակալի ազդեցություն չի ունեցել Ընկերության՝ 2024թ. դեկտեմբերի 31–ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների վրա:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ (շարունակություն)**ժ) Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)**

Նոր և փոփոխված ստանդարտներն ու մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են, բայց դեռևս ուժի մեջ չեն մտել, գնահատվում են Ընկերության կողմից՝ ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը որոշելու համար: Ինչպես նկարագրված է վերոնշյալ հատվածում, այն ներառելու է ստանդարտներ և փոփոխություններ, որոնք արդեն ուժի մեջ կլինեն՝ հիմնված նոր ստանդարտների կամ փոփոխությունների վրա, սակայն տեղական մակարդակով հաստատումը դեռևս ընթացքի մեջ է կամ կարող է հանգեցնել ավելի ուշ ուժի մեջ մտնելու:

- ▶ ՖՀՄՍ 18 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում.

2024 թվականի ապրիլին ՀՀՄՍԽ –ն հրապարակել է ՖՀՄՍ 18 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում ստանդարտը, որը փոխարինում է ՀՀՄՍ 1 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում ստանդարտին: ՖՀՄՍ 18–ը նոր պահանջներ է ներկայացնում շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ներկայացման գծով՝ ներառյալ որոշ հանրագումարներ և միջանկյալ հանրագումարներ: Ավելին, կազմակերպությունները պարտավոր են շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում բոլոր եկամուտներն ու ծախսերը դասակարգել՝ ըստ հինգ կատեգորիաների՝ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, շահութահարկ, ընդհատված գործառնականություններ, որոնցից առաջին երեք կատեգորիաները նոր են:

Այն նաև պահանջում է նոր, ղեկավարության կողմից սահմանած կատարողականի չափորոշիչների, եկամուտների և ծախսերի միջանկյալ հանրագումարների բացահայտում և ներառում է ֆինանսական տեղեկատվության համախմբման և տարանջատման նոր պահանջներ՝ հիմնված հիմնական ֆինանսական հաշվետվությունների (PFS) և ծանոթագրությունների «դերերի» վրա:

Բացի այդ, ՀՀՄՍ 7 Դրամական հոսքերի մասին հաշվետվություն ստանդարտում կատարվել են նեղ շրջանակի փոփոխություններ, որոնք ներառում են գործառնականություններից դրամական հոսքերի՝ անուղղակի մեթոդով որոշելու մեկնարկային կետի փոփոխություն՝ «շահույթ կամ վնաս»-ից դեպի «գործառնական շահույթ կամ վնաս» և շահաբաժիններից ու տոկոսագումարներից դրամական հոսքերի դասակարգման ընտրության հնարավորության վերացում: Ավելին, որոշակի համապատասխան փոփոխություններ են կատարվել մի քանի այլ ստանդարտներում

ՖՀՄՍ 18 ստանդարտը և այլ ստանդարտների փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2027 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է, սակայն անհրաժեշտ է բացահայտում: ՖՀՄՍ 18–ը կիրառվելու է հետևյալից: Ներկայումս Ընկերությունն աշխատում է բացահայտել այն բոլոր փոփոխությունները, որոնք ազդեցություն կունենան հիմնական ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների վրա:

- ▶ Փոփոխություններ ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7 ստանդարտներում – ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ. Ընկերությունը ներկայումս գնահատում է այն ազդեցությունը, որը փոփոխությունը կունենա հիմնական ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների վրա:
- ▶ ՀՀՄՍ 21 ստանդարտի փոփոխություններ – Փոխանակելիության բացակայություն, որը հստակեցնում է, թե ինչպես պետք է կազմակերպությունը գնահատի՝ արդյոք արտարժույթը փոխանակելի է, և ինչպես պետք է որոշել սփոթ փոխարժեքը փոխանակելիության բացակայության դեպքում: Ակնկալվում է, որ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:
- ▶ ՖՀՄՍ 19 Դուստր կազմակերպություններ՝ առանց հրապարակային հաշվետվողականության: Բացահայտումներ, որոնք հնարավորություն են տալիս իրավասու կազմակերպություններին ընտրություն կատարել՝ կիրառելու նվազեցված պահանջները բացահայտումների նկատմամբ՝ միաժամանակ կիրառելով հաշվապահական հաշվառման այլ ՀՀՄՍ ստանդարտների ծանաչման, չափման և ներկայացման պահանջները: Ընկերությունը ներկայումս գնահատում է այն ազդեցությունը, որը փոփոխությունը կունենա հիմնական ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների վրա:

(հազար ՀՀ դրամ)

4. Կարևոր հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են ունենում ֆինանսական հաշվետվություններում արտացոլված եկամուտների և ծախսերի գումարների վրա, ակտիվների և պարտավորությունների վրա, ինչպես նաև կից բացահայտումների և պայմանական պարտավորությունների բացահայտման վրա: Այս ենթադրությունների ու գնահատումների վերաբերյալ անորոշությունը կարող է հանգեցնել ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների՝ հաջորդող ֆինանսական տարում Էական ճշգրտումների առաջացման զգալի ռիսկ:

Դատողություններ

Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունների կիրառման ընթացքում ղեկավարությունը կատարել է դատողություններ, որոնք առավել նշանակալի ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա:

Վերահսկողություն ֆոնդի նկատմամբ

Չնայած այն փաստին, որ Ընկերությանը պատկանում է ֆոնդերից մեկի փայերի ավելի քան 50% – ը, նա եկել է այն եզրակացության, որ վերահսկողություն չի իրականացնում ֆոնդի նկատմամբ: Ֆոնդի կանոնների համաձայն՝ ընդհանուր ղեկավարումը և որոշումներ կայացնելու լիազորությունները վերապահվում են նշանակված ֆոնդի կառավարչին: Ֆոնդի կանոնների փոփոխությունները կարող է նախաձեռնել միայն ֆոնդի կառավարիչը և պահանջվում է հաստատում փայատերերի պարզ մեծամասնության կողմից՝ անկախ յուրաքանչյուր փայատիրոջ բաժնեմասի չափից: Բացի այդ, ֆոնդի կանոնները պահանջում են առնվազն երեք փայատերի առկայություն: 2024թ. դեկտեմբերի 31–ի դրությամբ ֆոնդը ուներ հինգ փայատեր: Հիմք ընդունելով այս գործոնները՝ Ընկերությունը որոշել է, որ իրավասու չէ ուղղորդել ֆոնդի համապատասխան գործունեությունը, և, հետևաբար, ֆոնդը համախմբված չէ այս ֆինանսական հաշվետվություններում:

Գնահատումներ և ենթադրություններ

Ապագային վերաբերող առանցքային ենթադրությունները և այլ առանցքային աղբյուրների գնահատման անորոշությանն առնչվող ենթադրությունները հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ, որոնք պարունակում են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի ճշգրտման նշանակալի ռիսկ, հաջորդ ֆինանսական տարում, ներկայացված են ստորև: Ընկերությունն իր ենթադրությունները և գնահատումները կառուցել է հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ հասանելի չափանիշների վրա: Ներկա հանգամանքները և ենթադրությունները ապագա զարգացումների վերաբերյալ, այնուամենայնիվ կարող են փոխվել շուկայական փոփոխությունների հետ կապված կամ Ընկերության վերահսկողությունից դուրս գտնվող հանգամանքներից ելնելով: Այսպիսի փոփոխությունները, երբ տեղի են ունենում, արտացոլվում են ենթադրություններում:

Իրական արժեքի չափում

Դատողությունները, որոնք Էական ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում և գնահատումներում ճանաչված գումարների վրա, որոնք կարող են առաջացնել ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի Էական ճշգրտում հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում, վերաբերում են ֆինանսական գործիքների հաշվառմանը, մասնավորապես իրական արժեքի չափմանը: Իրական արժեքի լավագույն ապացույցը գների գնանշումն է ակտիվ շուկայում: Ակտիվ շուկայում գնանշված գների բացակայության դեպքում Դեկլարությունն օգտագործում է գնահատման այլ մեթոդներ, օրինակ՝ համեմատական մոտեցումը նմանատիպ գործիքների հետ ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան շուկաներում, ինչպես նաև վաճառքի գործարքների փաստացի գները, որոնք տեղի են ունեցել հաշվետու ամսաթվին մոտ ժամանակահատվածում: Տե՛ս 13, 14, 25 ծանոթագրությունները:

(հազար ՀՀ դրամ)

5. Չուտ տոկոսային եկամուտ

	2024թ.	2023թ.
Տոկոսային եկամուտ՝		
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	3,674,855	1,974,126
Տոկոսային եկամուտ բանկային հաշիվներից և ավանդներից	117,566	27,193
Հակադարձ հետգնման պայմանագրեր	5,067	4,784
Այլ ակտիվներ	2,341	335
Ընդամենը տոկոսային եկամուտ	3,799,829	2,006,438
Տոկոսային ծախս՝		
Հետգնման պայմանագրեր	(2,357,467)	(1,668,347)
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(27,280)	(61,134)
Անհատներից ստացված փոխառություններ	(85,823)	(57,522)
Տոկոսային ծախս վարձակալության գծով պարտավորությունների համար	(18,556)	(20,405)
Այլ	(1,476)	–
Ընդամենը տոկոսային ծախս	(2,490,602)	(1,807,408)
Չուտ տոկոսային եկամուտ	1,309,227	199,030

6. Միջնորդավճարների և այլ վճարների գծով եկամուտ և ծախս

	2024թ.	2023թ.
Միջնորդավճարների և այլ վճարների գծով եկամուտ՝		
Բրոքերային ծառայություններ	4,232,811	9,129,536
Արժեթղթերի հաշիվների բացում և պահպանում	1,193,177	594,748
Դեպոզիտար ծառայություններ	393,827	2,695,269
Արժեթղթերի ռեեստրի վարում	112,857	96,955
Արժեթղթերի գրանցում	85,372	47,705
Արժեթղթերի տեղաբաշխում և գնանշում	43,373	35,271
Այլ միջնորդավճարների գծով եկամուտ	26,098	3,500
Ընդամենը միջնորդավճարների և այլ վճարների գծով եկամուտ	6,087,515	12,602,984
Միջնորդավճարների և այլ վճարների գծով ծախս՝		
Դեպոզիտարիաների կողմից մատուցված ծառայություններ	(911,857)	(822,366)
Գործակալական վճարներ	(531,760)	(860,998)
Բորսայական միջորդավճար	(1,596)	(2,129)
Այլ միջնորդավճարների գծով ծախս	(48,867)	(361)
Ընդամենը միջնորդավճարների և այլ վճարների գծով ծախս	(1,494,080)	(1,685,854)
Չուտ միջնորդավճարների և այլ վճարների գծով եկամուտ	4,593,435	10,917,130

Միջնորդավճարների և այլ վճարների մեջ ներառված են 564,344 հազար ՀՀ դրամ (2023թ.՝ 1,745,851 հազար ՀՀ դրամ) միջնորդավճարները, որոնք ստացվել են Ընկերությանն ասոցիացված «Գլոբալ» ՓԲԸ-ի կառավարման ներքո գտնվող ֆոնդերից:

7. Առևտրային գործառնություններից զուտ օգուտ

	2024թ.	2023թ.
Չուտ օգուտ արժեթղթերի առուվաճառքից և վերագնահատումից	5,609,010	6,578,623
Չուտ օգուտ արտարժույթի առուվաճառքի գործարքներից	547,976	300,089
Չուտ (վնաս)/օգուտ ածանցյալ ֆինանսական գործիքներից	(4,725)	46
Չուտ օգուտ	6,152,261	6,878,758

Արտարժույթի վերագնահատումից զուտ (վնաս)/օգուտը ներառում է շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային գործիքների գծով արտարժույթի փոխարժեքային վերագնահատումից ստացված 107,685 հազար դրամի զուտ վնասը (2023թ.՝ 509,018 հազար դրամի վնաս):

(հազար ՀՀ դրամ)

8. Անձնակազմի գծով ծախսեր

Անձնակազմի գծով ծախսերի մեջ ներառված են պարգևավճարներ 5,666,334 հազար ՀՀ դրամի չափով (2023թ.՝ 9,303,608 հազար ՀՀ դրամ), որոնք վճարվել են աշխատակիցներին շուկայի ընդլայնման գործունեության և նոր բիզնես սեգմենտի զարգացման համար:

9. Վարչական ծախսեր

	2024թ.	2023թ.
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների պահպանում	124,557	51,144
Ներկայացուցչական ծախսեր	81,411	25,098
Մասնագիտական ծառայություններ	80,787	156,225
Մաշվածություն	74,218	69,205
Գործուղում և վերապատրաստում	39,669	29,237
Կոմունալ ծախսեր	33,719	13,205
Բաժանորդագրություններ	14,825	47,515
Գովազդի ծախսեր	7,302	3,816
Շահութահարկից բացի այլ հարկեր	1,283	87,069
Այլ	42,370	20,891
Ընդամենը վարչական ծախսեր	500,141	503,405

2023 թվականին 70,509 հազար դրամի չափով չփոխհատուցվող ԱԱՀ-ի գծով ծախսը ներկայացվել է «Շահութահարկից բացի այլ հարկեր» տողում: 2024 թվականին Ընկերությունը վերանայել է իր մոտեցումը ներկայացման վերաբերյալ՝ չփոխհատուցվող ԱԱՀ-ն ուղղակիորեն բաշխելով համապատասխան ծախսային հոդվածներին՝ հիմքում ընկած գործարքների բնույթին համապատասխան:

10. Շահութահարկ

Ընկերության կողմից շահութահարկի կիրառելի դրույքաչափն է 18% (2023թ.՝ 18%): 2024 և 2023թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շահութահարկի գծով ծախսերի հիմնական բաղադրիչներն են՝

	2024թ.	2023թ.
Ընթացիկ հարկ	740,284	1,177,583
Հետաձգված հարկ	123,871	(33,679)
Ընդամենը	864,155	1,143,904

Արդյունավետ տոկոսադրույքի համադրում՝

	2024թ.		2023թ.	
	հազ. դրամ	%	հազ. դրամ	%
Շահույթը՝ մինչև շահութահարկով հարկումը	4,524,060		7,139,796	
Հարկման դրույքաչափով հաշվարկված հարկ	814,331	18.0%	1,285,163	18.0%
Նախորդ ժամանակաշրջանի ընթացիկ հարկի ճշգրտում	(10,370)	(0.2%)	(25,198)	(0.4%)
Արտարժույթի փոխարկումից (օգուտ)/վնաս	63,973	1.4%	(110,146)	(1.5%)
Այլ (չհարկվող)/չսվազեցվող հոդվածներ	(3,779)	(0.1%)	(5,915)	(0.1%)
	864,155	19.1%	1,143,904	16.0%

Հետաձգված հարկի գծով շարժը ներկայացվում է ստորև՝

	2024թ.	2023թ.
Մնացորդ տարեսկզբին	(8,412)	51,029
Ճանաչված շահույթում կամ վնասում	(123,871)	33,679
Ճանաչված այլ համապարփակ ֆինանսական արդյունքում	(227,123)	(93,120)
Մնացորդ տարեվերջին	(359,406)	(8,412)

(հազար ՀՀ դրամ)

10. Շահութահարկ (շարունակություն)**Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ**

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերագրելի են հետևյալին՝

	2024թ. հունվարի 1	Ճանաչված այլ համապարփակ ֆինանսական արդյունքում	Ճանաչված շահույթում կամ վնասում	2024թ. դեկտեմբերի 31
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	74,294	–	(22,539)	51,755
Վարձակալության գծով պարտավորություններ	23,788	–	3,340	27,128
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	–	–	713	713
Հակադարձ հետգնման պայմանագրեր	–	–	311	311
Այլ ակտիվներ	20,688	–	(1,312)	19,376
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	443	–	788	1,231
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	(25,566)	–	3,652	(21,914)
Ներդրումային արժեթղթեր	(102,059)	(227,123)	(108,824)	(438,006)
Հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	(8,412)	(227,123)	(123,871)	(359,406)

	2023թ. հունվարի 1	Ճանաչված այլ համապարփակ ֆինանսական արդյունքում	Ճանաչված շահույթում կամ վնասում	2023թ. դեկտեմբերի 31
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	35,839	–	38,455	74,294
Վարձակալության գծով պարտավորություններ	26,235	–	(2,447)	23,788
Հակադարձ հետգնման պայմանագրեր	48	–	(48)	–
Այլ ակտիվներ	848	–	19,840	20,688
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	757	–	(314)	443
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	(29,218)	–	3,652	(25,566)
Ներդրումային արժեթղթեր	16,520	(93,120)	(25,459)	(102,059)
Հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	51,029	(93,120)	33,679	(8,412)

11. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2024թ. դեկտեմբերի 31	2023թ. դեկտեմբերի 31
Ընթացիկ հաշիվներ բանկերում	4,862,980	1,034,950
Ընթացիկ հաշիվներ քլիրինգային համակարգերում	354,157	5,536,728
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում	5,217,137	6,571,678
Նվազեցում՝ արժեզրկման կորուստների գծով պահուստ	(6,838)	(2,459)
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	5,210,299	6,569,219

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը միջոցներ է տեղաբաշխել մեկ հայկական բանկում (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ մեկ քլիրինգային համակարգում), որոնց մնացորդները գերազանցում են Ընկերության սեփական կապիտալի 10%-ը: Այդ մնացորդների համախառն արժեքը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 3,042,655 հազար դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ին՝ 4,642,918 հազար դրամ):

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ըստ աշխարհագրական դիրքի ներկայացվում են ստորև՝

	2024թ.	2023թ.
Հայաստան	4,880,276	1,513,623
Ռուսաստան	42,993	12,112
Այլ երկրներ	287,030	5,043,484
	5,210,299	6,569,219

(հազար ՀՀ դրամ)

11. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (շարունակություն)

Ոչ մի գումար ժամկետանց կամ արժեզրկված չէ: Արժեզրկման կորուստների գծով պահուստների համադրումը ներկայացվում է ստորև՝

	2024թ.		2023թ.	
	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
Արժեզրկման կորուստների գծով պահուստ հունվարի 1-ի դրությամբ	2,459	2,459	4,204	4,204
Տարվա զուտ հատկացում (հակադարձում)	4,379	4,379	(1,745)	(1,745)
Արժեզրկման կորուստների գծով պահուստ դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,838	6,838	2,459	2,459

12. Հակադարձ հետզնման պայմանագրերով ստացման ենթակա միջոցներ

	2024թ. դեկտեմբերի 31	2023թ. դեկտեմբերի 31
Հայաստանյան ֆինանսական կազմակերպություններ, չվարկանշված	952,062	-
Ընդամենը հակադարձ հետզնման պայմանագրերով ստացման ենթակա միջոցներ	952,062	-
Նվազեցում հակադարձ հետզնման պայմանագրերի գծով արժեզրկման կորուստների գծով պահուստ	(1,728)	-
Ընդամենը հակադարձ հետզնման պայմանագրերով ստացման ենթակա միջոցներ	950,334	-

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետզնման պայմանագրերով ստացման ենթակա միջոցների մասով գրավադրվել են ՀՀ պետական և օտարերկրյա արժեթղթեր 1,027,162 հազար ՀՀ դրամ իրական արժեքով:

Ոչ մի մնացորդ ժամկետանց կամ արժեզրկված չէ: Արժեզրկման կորուստների գծով պահուստների համադրումը ներկայացվում է ստորև՝

	2024թ.		2023թ.	
	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
Արժեզրկման կորուստների գծով պահուստ հունվարի 1-ի դրությամբ	-	-	-	-
Տարվա ծախս	1,728	1,728	-	-
Արժեզրկման կորուստների գծով պահուստ դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,728	1,728	-	-

13. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

	2024թ. դեկտեմբերի 31	2023թ. դեկտեմբերի 31
Ընկերության կողմից պահվող		
Կորպորատիվ պարտքային գործիքներ ֆիքսված մարման ժամկետով	1,022,278	732,995
ՀՀ պետական արժեթղթեր	867,336	-
Կորպորատիվ բաժնային գործիքներ	553,468	4,272,100
Ընկերության ասոցիացված ընկերության կառավարման ներքո գտնվող ֆոնդերի փայերում ներդրումներ	1,046,279	463,042
Պետական արժեթղթեր-այլ երկրներ	1,405,267	1,080,921
Ընդամենը Ընկերության կողմից պահվող	4,894,628	6,549,058
Հետզնման պայմանագրերի դիմաց գրավադրված		
ՀՀ պետական արժեթղթեր	2,502,354	1,504,482
Ընդամենը հետզնման պայմանագրերի դիմաց գրավադրված	2,502,354	1,504,482
Ֆինանսական կազմակերպություններից ստացված փոխառությունների դիմաց գրավադրված		
ՀՀ պետական արժեթղթեր	-	1,903,586
Ընդամենը ֆինանսական կազմակերպություններից ստացված փոխառությունների դիմաց գրավադրված	-	1,903,586
Ընդամենը շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	7,396,982	9,957,126

(հազար ՀՀ դրամ)

13. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ (շարունակություն)

Ֆոնդի փայտերում ներդրումները Ընկերության ասոցիացված ընկերության կառավարման ներքո գտնվող ֆոնդերում փայտամասնակցություններն են: Այս փայտերը հաշվետու ամսաթվի դրությամբ հաշվառվում են ֆոնդերի զուտ ակտիվների արժեքում Ընկերության մասնաբաժնի չափով:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները՝ ըստ թողարկողի երկրի, կազմում են՝

	2024թ.	2023թ.
Հայաստան	5,202,779	4,122,781
Ռուսաստան	511,344	2,170,684
Այլ երկրներ	1,682,859	3,663,661
Առևտրային արժեթղթեր	7,396,982	9,957,126

Օտարերկրյա ընկերությունների կամ կառավարությունների կողմից թողարկված արժեթղթերով ակտիվորեն առուվաճառք է իրականացվում միջազգային շուկաներում: Գրավադրված ակտիվները ներկայացված են ծան. 20 և 21: Իրական արժեքի չափումները ներկայացված են ծան. 25-ում:

14. Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

	2024թ. դեկտեմբերի 31	2023թ. դեկտեմբերի 31
Ընկերության կողմից պահվող		
ՀՀ պետական արժեթղթեր	5,429,814	2,802,376
Ընդամենը Ընկերության կողմից պահվող	5,429,814	2,802,376
Հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		
ՀՀ պետական արժեթղթեր	38,003,618	23,882,741
Ընդամենը հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված	38,003,618	23,882,741
Ֆինանսական կազմակերպություններից փոխառությունների դիմաց գրավադրված		
ՀՀ պետական արժեթղթեր	–	514,833
Ընդամենը ֆինանսական կազմակերպություններից փոխառությունների դիմաց գրավադրված	–	514,833
Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	43,433,432	27,199,950

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պետական պարտքային արժեթղթերն իրենցից ներկայացնում են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից թողարկված արժեթղթեր տարեկան արժեկտրոնային ֆիքսված եկամտաբերությամբ, որը տատանվում է 7%-ի և 13%-ի միջակայքում (2023թ.՝ տարեկան 7 – 13%) և մարվում է 2025–2052թթ. (2023թ.՝ 2025 – 2052թթ.): Այս գործիքների իրական արժեքը չափվում է՝ օգտագործելով գնահատման տեխնիկա՝ հիմնված գործող շուկայական տոկոսադրույքների վրա, որպես տվյալ ֆինանսական գործիքի զեղչված ապագա դրամական հոսքեր կամ գնանշումներ:

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների արժեքը կման կորուստների գծով պահուստի շարժը՝

	2024թ. Փուլ 1	2023թ. Փուլ 1
Հունվարի 1-ի դրությամբ	57,597	16,872
Արժեզրկման պահուստի զուտ ծախս	25,487	40,725
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	83,084	57,597

Իրական արժեքի չափումները ներկայացված են ծան. 25-ում:

15. Ներդրումներ ասոցիացված ընկերությունում և համատեղ ձեռնարկություններում**Ներդրումներ ասոցիացված ընկերությունում**

	Հիմնական գործունեություն	Ստեղծման վայրը և գործունեության հիմնական վայրը	Ընկերության սեփականության տոկոսի և ձայնի իրավունքի համամասնությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ	
			2024թ.	2023թ.
Ներդրումային ֆոնդերի կառավարիչ		Երևան, Հայաստան	33%	33%

2018 թվականին Ընկերությունը ներդրում է կատարել «Գլոբալ» ՓԲԸ-ում, որի հիմնական գործունեությունը ոչ հրապարակային ֆոնդերի կառավարման ծառայությունների մատուցումն է:

Այս ներդրման վերաբերյալ ամփոփ ֆինանսական տեղեկատվությունը ներկայացվում է ստորև, որը պատրաստվել է ասոցիացված ընկերության ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

«Գլոբալ» ՓԲԸ	2024թ.	2023թ.
Մնացորդը ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	210,617	144,288
Ասոցիացված ընկերության տարվա շահույթում Ընկերության բաժնեմասը	97,712	66,329
Ընդամենը	308,329	210,617
«Գլոբալ» ՓԲԸ	2024թ.	2023թ.
Հասույթ	287,632	127,823
Տարվա շահույթ և այլ համապարփակ եկամուտ	292,597	195,249
Ընդամենը ակտիվներ	961,862	653,306
Ընդամենը պարտավորություններ	36,780	20,822
Սեփական կապիտալ	925,082	632,485

Ներդրումներ համատեղ ձեռնարկությունում

Ընկերության համատեղ ձեռնարկության մասին տեղեկատվությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկայացված է ստորև՝

Համատեղ ձեռնարկության անվանումը	Հիմնական գործունեություն	Գրանցման և գործունեության հիմնական վայրը	Ընկերությանը պատկանող սեփականության բաժնեմասի և ձայնի իրավունքի մասնաբաժինը	
			2024թ. դեկտեմբերի 31	2023թ. դեկտեմբերի 31
«Ինվեսթ ին Էյ Էմ» ՓԲԸ	Խորհրդատվական ընկերություն	Երևան, Հայաստան	50%	50%
«Ինվեսթ ին Էյ Էմ» ՓԲԸ			2024թ. դեկտեմբերի 31	2023թ. դեկտեմբերի 31
Մնացորդը ժամանակաշրջանի սկզբում			16,359	22,833
Ընկերության մասնաբաժինը համատեղ ձեռնարկության վնասում տարվա ընթացքում			(16,359)	(6,474)
Ընդամենը			-	16,359

(հազար ՀՀ դրամ)

15. Ներդրումներ ասոցիացված ընկերությունում և համատեղ ձեռնարկություններում (շարունակություն)**Ներդրումներ համատեղ ձեռնարկությունում (շարունակություն)**

Այս ներդրման վերաբերյալ ամփոփ ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է ստորև, որը պատրաստվել է համատեղ ձեռնարկության ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

	2024թ. դեկտեմբերի 31	2023թ. դեկտեմբերի 31
«Ինվեսթ ին Էյ Էմ» ՓԲԸ	(31,235)	(6,376)
Տարվա վնաս և այլ համապարփակ վնաս	1,716	32,975
Ընդամենը ակտիվներ	233	257
Ընդամենը պարտավորություններ	1,483	32,718

2020թ. օգոստոսի 17-ին Արմբրոկ ԲԲԸ-ն և Հովսեփ Պատվականյանը հիմնադրեցին Ինվեսթ ին Էյ Էմ անվամբ իրավաբանական անձ, որի գրանցման հասցեն է՝ ՀՀ, Երևան, Հանրապետության 39: Ինվեսթ ին Էյ Էմ-ի կանոնադրական կապիտալը սահմանված է 48,000 հազար ՀՀ դրամի չափով, որը բաժանված է 10,000 բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը 4,800 ՀՀ դրամ անվանական արժեքով: Ինվեսթ ին Էյ Էմ-ը մասնավոր խորհրդատվական ընկերություն է, որն աջակցում է ներդրողներին առաջարկներով, իսկ հայկական արտահանող ընկերություններին՝ հավանական գնորդներով: Ինվեսթ ին Էյ Էմ-ը հիմնականում զբաղվում է ստարտափ նախագծերի համար հարթակի մշակմամբ: Վերը նշված համատեղ ձեռնարկությունը սույն ֆինանսական հաշվետվություններում հաշվառվում է բաժնային մասնակցության մեթոդով՝ Ծան. 3-ում ներկայացված Ընկերության հաշվապահական քաղաքականությանը համապատասխան:

16. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

	Վարձակալ- ված ակտիվների բարելավում	Հաղորդակ- ցության սարքեր և համակարգի չներ	Փոխադրա- միջոցներ	Գրասենյա- կային սարքավո- րումներ, տնտեսա- կան գույք և այլ	Ընդամենը հիմնական միջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք							
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	116,297	10,349	49,927	99,022	275,595	6,367	281,962
Ավելացումներ	-	32,023	-	27,561	59,584	29,333	88,917
Վերադասակարգում	-	-	-	-	-	(6,367)	(6,367)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	116,297	42,372	49,927	126,583	335,179	29,333	364,512
Ավելացումներ	-	18,124	137,916	26,656	182,696	5,574	188,270
Օտարումներ	-	(1,218)	(17,580)	(3,206)	(22,004)	-	(22,004)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	116,297	59,278	170,263	150,033	495,871	34,907	530,778
Կուտակված մաշվածություն							
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	6,336	8,166	36,022	20,048	70,572	6,367	76,939
Տարվա ծախս	5,813	27,437	5,837	5,951	45,038	3,877	48,915
Օտարումներ	-	-	-	-	-	(6,367)	(6,367)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	12,149	35,603	41,859	25,999	115,610	3,877	119,487
Տարվա ծախս	5,812	10,726	16,635	10,899	44,072	9,856	53,928
Օտարումներ	-	(1,218)	(13,157)	(3,001)	(17,376)	-	(17,376)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	17,961	45,111	45,337	33,897	142,306	13,733	156,039
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	104,148	6,769	8,068	100,584	219,569	25,456	245,025
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	98,336	14,167	124,926	116,136	353,565	21,174	374,739

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 42,926 հազար ՀՀ դրամ (2023թ.՝ 29,383 հազար ՀՀ դրամ):

(հազար ՀՀ դրամ)

17. Վարձակալություն

Ընկերությունը վարձակալում է գրասենյակային տարածք: Վարձակալության պայմանագիրը կնքվել է 10 տարի ժամկետով, և վարձակալության պայմանագրով այդ ժամանակահատվածը համարվում է չեղյալ չհամարվող: Ընկերությունը իրավունք չունի ակտիվ վաճառել կամ գրավադրել ուրպես ապահովության միջոց: Գրասենյակային տարածքի վարձակալության պայմանագրի համաձայն Ընկերությունը պարտավոր է պահպանել այն բարեկարգ վիճակում և վարձակալության ժամկետի ավարտին վերադարձնել այդ տարածքը իր սկզբնական վիճակում:

Ֆինանսավորման գործունեությունից բխող պարտավորությունների համադրում

Ստորև աղյուսակում մանրամասն ներկայացվում են Ընկերության՝ ֆինանսավորման գործունեությունից առաջացած պարտավորությունների գծով փոփոխությունները, ներառյալ դրամական հոսքերը և ոչ դրամական փոփոխությունները: Ֆինանսավորման գործունեությունից առաջացած պարտավորությունները այն պարտավորություններն են, որոնց համար դրամական միջոցների հոսքերը դասակարգվել են կամ ապագա դրամական հոսքերը կդասակարգվեն Ընկերության՝ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում որպես դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից: Վճարված տոկոսային ծախսերը դասակարգվել են որպես գործառնական գործունեություն դրամական միջոցների մասին հաշվետվությունում:

	2024թ. հունվարի 1	Տարվա ընթացքում ճանաչված	Չուտ մուտքեր /մարումներ – դրամական հոսքեր	Տոկոսային ծախս	2024թ. դեկտեմբեր 31
Վարձակալության գծով պարտավորություններ	132,155	–	–	18,556	150,711
	132,155	–	–	18,556	150,711

	2023թ. հունվարի 1	Տարվա ընթացքում ճանաչված	Չուտ մուտքեր /մարումներ – դրամական հոսքեր	Տոկոսային ծախս	2023թ. դեկտեմբեր 31
Վարձակալության գծով պարտավորություններ	145,750	–	(34,000)	20,405	132,155
	145,750	–	(34,000)	20,405	132,155

2024 թվականի 34,000 հազար ՀՀ դրամ վարձավճարը վճարվել է 2025թ. հունվարին:

Ստորև աղյուսակում ներկայացված են օգտագործման իրավունքի ձևով ակտիվների հաշվեկշռային արժեքները և չարժեք ժամանակաշրջանի ընթացքում՝

	Շինություններ	Ընդամենը
Սկզբնական արժեք		
Մնացորդը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ	210,510	210,510
Տեղափոխում	–	–
Մնացորդը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	210,510	210,510
Ավելացումներ	–	–
Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	210,510	210,510
Կուտակված մաշվածություն		
Մնացորդը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ	48,189	48,189
Մաշվածության ծախս	20,290	20,290
Մնացորդը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	68,479	68,479
Մաշվածության ծախս	20,290	20,290
Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	88,769	88,769
Հաշվեկշռային արժեք		
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	142,031	142,031
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	121,741	121,741

(հազար ՀՀ դրամ)

17. Վարձակալություն (շարունակություն)

Ֆինանսավորման (շարունակություն)	գործունեությունից բխող	պարտավորությունների	համադրում
Ազդեցությունը շահույթի կամ վնասի վրա		2024թ.	2023թ.
Ազդեցությունը շահույթի/(վնասի) վրա տարվա համար			
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածության աճ		20,290	20,290
Ֆինանսական ծախսերի աճ (Ծան. 5)		18,556	20,405
		38,846	40,695
Ծախսերի նվազում տարվա համար			
Վարձակալության գծով պարտավորություն			
Ժամկետայնության վերլուծություն՝		2024թ.	2023թ.
1-ին տարի		68,000	34,000
2-րդ տարի		34,000	34,000
3-րդ տարի		34,000	34,000
4-րդ տարի		34,000	34,000
5-րդ տարի		34,000	34,000
6-րդ և ավել		-	34,000
		204,000	204,000
Նվազեցում՝ չվաստակած տոկոսային եկամուտ		(53,289)	(71,845)
		150,711	132,155
Վերլուծված որպես՝			
Ոչ ընթացիկ		99,051	116,711
Ընթացիկ		51,660	15,444
		150,711	132,155

18. Այլ ակտիվներ

	2024թ. դեկտեմբերի 31	2023թ. դեկտեմբերի 31
Այլ ֆինանսական ակտիվներ		
Մատուցված ծառայությունների դիմաց ստացման ենթակա գումարներ	467,619	483,646
Արժեթղթերով գործարքների գծով դեբիտորական պարտքեր	110,802	118,199
Բանկերի և քլիրինգային համակարգերի գծով դեբիտորական պարտքեր	70,768	115,632
Աշխատակիցներին տրված վարկեր	635	1,008
Նվազեցում՝ արժեզրկման կորուստների գծով պահուստ	(107,644)	(114,930)
	542,180	603,555
Այլ ոչ ֆինանսական ակտիվներ		
Կանխավճար հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների գծով	-	67,385
Այլ	40,102	17,668
	40,102	85,053
Ընդամենը այլ ակտիվներ	582,282	688,608

Այլ ակտիվների մեջ ներառված են ասոցիացված «Գլոբալ» ՓԲԸ-ի կառավարման ներքո գտնվող ֆոնդերից ստացվելիք գումար՝ 21,059 հազար ՀՀ դրամ չափով:

Ընկերության այլ ֆինանսական ակտիվների՝ պարտքային ռիսկին ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև՝

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ոչ ժամկետանց	Մինչև 3 ամիս ժամկետանց	3-6 ամիս	6 ամսից ավել	Ընդամենը
Համախառն հաշվեկշռային արժեք	430,274	43,697	20,588	155,265	649,824
Ակնկալվող պարտքային կորուստներ	(4,879)	(10,996)	(5,181)	(86,588)	(107,644)
	425,395	32,701	15,407	68,677	542,180
Զուտ հաշվեկշռային արժեք					

(հազար ՀՀ դրամ)

18. Այլ ակտիվներ (շարունակություն)

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ոչ ժամկետանց	Մինչև 3 ամիս ժամկետանց	3–6 ամիս	6 ամսից ավել	Ընդամենը
Համախառն հաշվեկշռային արժեք	505,790	44,032	89,045	79,618	718,485
Ակնկալվող պարտքային կորուստներ	(11,594)	(6,748)	(23,495)	(73,093)	(114,930)
Չուտ հաշվեկշռային արժեք	494,196	37,284	65,550	6,525	603,555

Արժեզրկման կորուստների գծով պահուստը ճանաչվել է պարզեցված մեթոդի հիմա վրա: Արժեզրկման կորուստների գծով պահուստի համադրումը ՖՀՄՍ 9-ի համաձայն ներկայացված է ստորև՝

	2024թ. դեկտեմբերի 31	2023թ. դեկտեմբերի 31
Տարվա սկիզբ	114,930	4,710
Տարվա զուտ ծախս	7,170	124,210
Չուտ դուրսգրումներ	(14,456)	(13,990)
Վերջնական մնացորդ տարեվերջի դրությամբ	107,644	114,930

19. Սեփական կապիտալ

2024 և 2023թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 267,150 հազար ՀՀ դրամ՝ ներկայացված յուրաքանչյուրը 1,000 դրամ անվանական արժեքով 267,150 սովորական բաժնետոմսերով: Սովորական բաժնետոմսերի տերերն իրավունք ունեն շահաբաժին ստանալ և ունեն մեկ բաժնետոմսի դիմաց մեկ ձայնի իրավունք: Ընկերության բաժնետիրական կապիտալը վճարվել է մասնակիցների կողմից ՀՀ դրամով, և նրանք ունեն շահաբաժիններ ստանալու և ՀՀ դրամով կապիտալի բաշխման ցանկացած գործընթացի մասնակցելու իրավունք: 2024 թվականին հայտարարվել և վճարվել են 400,725 հազար ՀՀ դրամի չափով շահաբաժիններ, մեկ բաժնետոմսի գծով շահաբաժինը կազմել է 1,500 ՀՀ դրամ (2023թ.՝ 267,150 հազար դրամ և մեկ բաժնետոմսի համար շահաբաժինը կազմում է 1,000 ՀՀ դրամ):

2024 և 2023թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բաժնետերերն են՝

	2024թ. դեկտեմբերի 31		2023թ. դեկտեմբերի 31	
	Վճարված բաժնետիրական կապիտալ	Ընդամենը վճարված կապիտալի %	Վճարված բաժնետիրական կապիտալ	Ընդամենը վճարված կապիտալի %
Արամ Կայֆաջյան	115,058	43.07%	113,058	42.32%
«ԶԵՐՄԱՆ ԶՈՋԱԶԻԱՆ ԹՐԵՅԴԻՆԳ» ՍՊԸ	65,292	24.44%	65,292	24.44%
Աշոտ Չաղարյան	24,328	9.11%	24,328	9.11%
Այլ բաժնետերեր	62,472	23.38%	64,472	24.13%
	267,150	100.00%	267,150	100.00%

Բաժնետերերի միջև բաշխման ենթակա պահուստները հավասար են չբաշխված շահույթի կուտակային գումարին՝ համաձայն ՀՀ օրենսդրության: Չբաշխվող պահուստներն իրենցից ներկայացնում են պահուստային ֆոնդ, որը ստեղծված է համաձայն օրենսդրական պահանջների՝ ընդհանուր ռիսկերի, այդ թվում՝ ապագա կորուստների և այլ չնախատեսված ռիսկերի և այլ պայմանական ռեպերի համար: Պահուստային ֆոնդը ձևավորվել է ըստ Ընկերության կանոնադրության պահանջների, որտեղ սահմանված է այս նպատակներով պահուստի ձևավորում կանոնադրական կապիտալի ոչ պակաս, քան 15%-ի չափով:

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով պահուստը բաղկացած է այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի կուտակային զուտ փոփոխությունից, բացառությամբ այն ռեպերի, երբ ակտիվները ապաճանաչվում են շահույթ կամ վնաս փոխանցվելիս:

(հազար ՀՀ դրամ)

20. Հետզնման պայմանագրերով վճարման ենթակա գումարներ

Ընկերությունն ունի հետզնման կամ հակադարձ հետզնման համաձայնագրերով գործարքներ: Հետզնման համաձայնագրերով փոխառություն տրված կամ վաճառված արժեթղթերը փոխանցվում են երրորդ կողմին Ընկերության կողմից ստացված դրամական միջոցների փոխարեն: Այս ֆինանսական ակտիվները կարող են վերագրավադրվել կամ վերավաճառվել գործընկերների կողմից Ընկերության կողմից պարտավորությունների չկատարման (դեֆոլտի) բացակայության դեպքում, սակայն գործընկերը պարտավորվում է վերադարձնել արժեթղթերը պայմանագրի ավարտին: Ընկերության սահմանմամբ այդ արժեթղթերի գծով բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվել են, և այդ իսկ պատճառով դրանք չեն ապահանջվել: Այս գործարքներն իրականացվում են այն պայմաններով, որոնք ընդունված են ստանդարտ վարկավորման և արժեթղթերի փոխառության ու վարկային գործունեության ժամանակ:

Հետզնման պայմանագրեր

Հետզնման պայմանագրերի դիմաց փոխանցված և գրավադրված՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող սեփական ֆինանսական ակտիվների իրական արժեքը (Ծան. 14)

Հետզնման պայմանագրերի դիմաց փոխանցված և գրավադրված՝ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող սեփական ֆինանսական ակտիվների իրական արժեքը (Ծան. 13)

Ընդամենը հետզնման պայմանագրերի դիմաց փոխանցված և գրավադրված ֆինանսական ակտիվներ
Հետզնման պայմանագրերով հայկական բանկերի նկատմամբ պարտավորություններ

2024թ. դեկտեմբերի 31	2023թ. դեկտեմբերի 31
38,003,618	23,882,741
2,502,354	1,504,482
40,505,972	25,387,223
37,710,716	23,854,597

21. Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նկատմամբ

Կարճաժամկետ փոխառություններ ֆիզիկական անձից

Վարկեր և օվերդրաֆտներ հայկական բանկից

Ընդամենը պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

2024թ. դեկտեմբերի 31	2023թ. դեկտեմբերի 31
2,243,443	858,548
–	2,273,797
2,243,443	3,132,345

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ֆիզիկական անձի նկատմամբ պարտավորությունները հանդիսանում են կարճաժամկետ փոխառություններ 3% ֆիքսված տոկոսադրույքով և մինչև 2025 թվականի հունվար ամիսը մարման ժամկետով (2023թ. դեկտեմբերի 31՝ 3%-ից 3.5%, մինչև 2024 թվականի փետրվարի ամիսը մարման ժամկետով): Այս պարտավորությունները արտահայտված են ԱՄՆ դոլարով: Ֆիզիկական անձանց նկատմամբ պարտավորությունները ապահովված չեն:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների տարեկան ֆիքսված տոկոսադրույքը կազմում է 2.5%, ժամկետայնությունը՝ 2023թ. դեկտեմբերից մինչև 2024թ. հունվար: Այս պարտավորությունների արժույթն է հանդիսանում ԱՄՆ դոլարը: Ստորագրված պայմանագրերի համաձայն օվերդրաֆտը հասանելի է մինչև 2025 թվականը:

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների դիմաց գրավադրված՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող և շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները, որոնք հանդիսանում են պետական և կորպորատիվ պարտատոմսեր, 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 2,418,419 հազար դրամ (Ծան. 13, 14):

22. Պարտավորություններ վերջնահաշվարկ չանցած գործարքների մասով

Իր գործունեության ընթացքում Ընկերությունը արժեթղթերի ձեռքբերման նպատակով հաճախորդներից ստանում է կանխավճարներ հետագայում դրանք հաճախորդներին փոխանցելու նկատառումներով: Վերջնահաշվարկ չանցած գործարքների գծով պարտավորությունները հանդիսանում են հատուցումներ ստացված հաճախորդներից արժեթղթերի վերջնահաշվարկի չենթարկված ձեռքբերումների համար հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Բոլոր գումարները պատշաճ կերպով վերջնահաշվարկի են ենթարկվել հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո:

(հազար ՀՀ դրամ)

23. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	2024թ. դեկտեմբերի 31	2023թ. դեկտեմբերի 31
Այլ ֆինանսական պարտավորություններ՝		
Պարտավորություններ աշխատավարձի մասով	1,186,076	1,357,991
Զօգտագործված արձակուրդի հաշվեգրում	280,404	251,875
Կրեդիտորական պարտավորություններ	119,149	245,558
	1,585,629	1,855,424
Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ՝		
Հաճախորդներից ստացված կանխավճարներ	68,574	56,380
Վճարման ենթակա հարկեր, բացառությամբ շահույթահարկի	295,607	353,497
	364,181	409,877
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,949,810	2,265,301

24. Ռիսկերի կառավարում**Ընդհանուր նկարագրություն**

Ռիսկերի կառավարումը կարևորագույն դեր է խաղում Ընկերության գործունեության համար և հանդիսանում է որոշիչ բաղադրիչ Ընկերության գործառնական գործունեության համար: Ընկերության գործունեությանը բնորոշ են մի շարք ռիսկեր, ինչպիսիք են՝ շուկայական, պարտքային, իրացվելիության ռիսկերը, ինչպես նաև՝ գործառնական, իրավաբանական և վարկանիշային ռիսկերը:

ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և հսկողության մեխանիզմներ, ինչպես նաև անընդհատ հսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների փոփոխությունները, առաջարկվող արտադրանքն ու ծառայությունները և ընդունված լավագույն փորձն արտացոլելու նպատակով:

Բաժնետերերը պատասխանատու են ռիսկերի կառավարման համակարգի աշխատանքի, առանցքային ռիսկերի կառավարման գործընթացի հսկողության, ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման և խոշոր գործարքների հաստատման համար:

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ռիսկերի մեղմացմանն ուղղված միջոցառումների հսկողության և իրականացման ու ռիսկերի համար սահմանված սահմանաչափերում Ընկերության գործունեության իրականացումն ապահովելու համար:

Գործադիր տնօրենը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման և սահմանված պահանջների հետ համապատասխանության ապահովման, ինչպես նաև ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառման համար: Նա հաշվետու է ուղղակիորեն բաժնետերերին:

Ռիսկի թե՛ արտաքին և թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են Ընկերության ներսում: Ընկերությունը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկերի մեղմացմանն ուղղված ընթացիկ միջոցառումների նպատակահարմարության որոշմանը:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Ընկերության նկատմամբ: Ընկերությունը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր պարտքային ռիսկերը կառավարելու նպատակով (և՛ ճանաչված ֆինանսական ակտիվների, և՛ չճանաչված պայմանագրային պարտավորությունների համար):

Պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը սովորաբար արտացոլվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Հավանական պարտքային ռիսկերի նվազեցման նպատակով ակտիվների և պարտավորությունների հնարավոր զուտանցման ազդեցությունը նշանակալի չի:

(հազար ՀՀ դրամ)

24. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

բ) Պարտքային ռիսկ (շարունակություն)

Պարտքային որակ ըստ ֆինանսական ակտիվների դասի

Ֆինանսական ակտիվների պարտքային որակը կառավարվում է Ընկերության կողմից՝ հիմք ընդունելով արտաքին վարկանշային համակարգ: Չվարկանշված ռիսկերը դասակարգվում են «Ստանդարտ դաս»-ում, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք արժեզրկված են:

2024 և 2023թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրերով ստացվելիք գումարները, համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները և դրամական միջոցները և դրանց համարժեքները՝ բացառությամբ ռուսական բանկերում տեղաբաշխված միջոցները, դասակարգվել են “ստանդարտ դաս”-ում և ներառվել են Փուլ 1-ում՝ ԱՊԿ հաշվարկի նպատակով: Ռուսական բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները դասակարգվում են “ստանդարտից ցածր դաս”-ում և ներառվել են Փուլ 1-ում՝ ԱՊԿ հաշվարկի նպատակով:

Ստորև աղյուսակը ներկայացնում է Ընկերության գործընկերների գնահատման համակարգի և արտաքին վարկանշման մանրամասները 2024 և 2023թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

Moody's միջազգային վարկանիշային գործակալության վարկանիշ	Ներքին վարկանշման նկարագրություն		ԴՀ
Aaa-ից A3	Բարձր դաս	0-0.06%	
Baa1-ից B3	Ստանդարտ	0.09-4.43%	
Caa1-ից C	Ստանդարտից ցածր դաս	6.82-35.82%	
D և ավելի ցածր վարկանիշ	Արժեզրկված	100%	

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

Moody's միջազգային վարկանիշային գործակալության վարկանիշ	Ներքին վարկանշման նկարագրություն		ԴՀ
Aaa-ից A3	Բարձր դաս	0-0.06%	
Baa1-ից B3	Ստանդարտ	0.1-4.52%	
Caa1-ից C	Ստանդարտից ցածր դաս	6.93-33.62.0%	
D և ավելի ցածր վարկանիշ	Արժեզրկված	100%	

Ստորև աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների յուրաքանչյուր դասի գծով Ընկերության ռիսկին ենթարկվածությունը ըստ ներքին վարկանիշերի, 2024 և 2023թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ներքին վարկանիշ Փուլ	2024թ. դեկտեմբերի 31			2023թ. դեկտեմբերի 31		
	Ստանդարտ			Ստանդարտ		
	Ստանդարտ Փուլ 1	ից ցածր դաս Փուլ 1	Ընդամենը	Ստանդարտ Փուլ 1	ից ցածր դաս Փուլ 1	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5,167,306	42,993	5,210,299	6,557,107	12,112	6,569,219
Հակադարձ հետգնման պայմանագրերով ստացվելիք գումարներ	950,334	–	950,334	–	–	–
Համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	43,433,432	–	43,433,432	27,199,950	–	27,199,950
	49,551,072	42,993	49,594,065	33,757,057	12,112	33,769,169

(հազար ՀՀ դրամ)

24. Ռիսկերի կառավարում (շարունակություն)**բ) Պարտքային ռիսկ (շարունակություն)**

Ֆինանսական ակտիվների նկատմամբ ակնկալվող վարկային կորստի պահուստի շարժը ներկայացված է ստորև.

	Այլ համապար- փակ ֆինանսա- կան արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինան- սական ակտիվներ	Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	Հակադարձ հետզնման պայմանա- գրեր	Այլ ֆինանսա- կան ակտիվներ	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	16,872	4,204	267	4,710	26,053
Կորուստների գծով պահուստի զուտ ծախս/(հակադարձում)	40,725	(1,745)	(267)	124,210	162,923
Դուրսգրումներ	–	–	–	(13,990)	(13,990)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	57,597	2,459	–	114,930	174,986
Կորուստների գծով պահուստի զուտ ծախս	25,487	4,379	1,728	7,170	38,764
Դուրսգրումներ	–	–	–	(14,456)	(14,456)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	83,084	6,838	1,728	107,644	199,294

Իրացվելիության ռիսկ և համապատասխան կառավարում

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունը դժվարություն կունենա իր այն ֆինանսական պարտավորությունները կատարելիս, որոնց մարումը նախատեսվում է կատարել դրամական միջոցներով կամ այլ ֆինանսական ակտիվներով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման հիմնարար գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել կորուստների ռիսկը:

Ընկերությունը ձգտում է պահպանել իրացվելիության կառավարումը՝ դրամական միջոցների հոսքերի պահանջներն արագ և արդյունավետ բավարարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- ▶ Դրամական հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և այդ դրամական հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- ▶ Պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- ▶ Պարտքի հաշվին ֆինանսավորման ներգրավման ծրագրերի մշակում
- ▶ Բարձր իրացվելի ակտիվների պորտֆելի պահպանում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական հոսքերի դադարեցման դեպքում,
- ▶ Իրացվելիության և ֆինանսավորման անընդհատությունն ապահովող ծրագրերի մշակում,

(հազար ՀՀ դրամ)

24. Ռիսկերի կառավարում (շարունակություն)**բ) Պարտքային ռիսկ (շարունակություն)**

Ստորև աղյուսակը ներկայացնում է Ընկերության ֆինանսական պարտավորությունների ժամկետայնությունը՝ հիմնված պայմանագրային չգեղջված հետվճարման պարտավորությունների վրա:

	2024թ. դեկտեմբերի 31					
	Ցայահանք և մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը
Ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման պայմանագրերով վճարման ենթակա գումարներ	37,788,774	-	-	-	-	37,788,774
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նկատմամբ	2,246,030	-	-	-	-	2,246,030
Պարտավորություններ վերջնահաշվարկ չանցած գործարքների մասով	855,247	-	-	-	-	855,247
Վարձակալության գծով պարտավորություններ	34,000	-	34,000	136,000	-	204,000
Առևտրային և այլ կրեդիտորական պարտք	1,305,225	-	280,404	-	-	1,585,629
Ընդամենը չգեղջված ֆինանսական պարտավորություններ	42,229,276	-	314,404	136,000	-	42,679,680
	2023թ. դեկտեմբերի 31					
	Ցայահանք և մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը
Ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման պայմանագրերով վճարման ենթակա գումարներ	23,899,874	-	-	-	-	23,899,874
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նկատմամբ	3,136,914	-	-	-	-	3,136,914
Պարտավորություններ վերջնահաշվարկ չանցած գործարքների մասով	3,930,608	-	-	-	-	3,930,608
Վարձակալության գծով պարտավորություններ	2,833	5,667	25,500	136,000	34,000	204,000
Առևտրային և այլ կրեդիտորական պարտք	1,603,549	-	251,875	-	-	1,855,424
Ընդամենը չգեղջված ֆինանսական պարտավորություններ	32,573,778	5,667	277,375	136,000	34,000	33,026,820

(հազար ՀՀ դրամ)

24. Ռիսկերի կառավարում (շարունակություն)**բ) Պարտքային ռիսկ (շարունակություն)****Գործառնական ռիսկ**

Գործառնական ռիսկը համակարգի խափանման, աշխատակազմի կողմից թույլ տրված սխալների, խարդախությունների կամ արտաքին գործոնների հետևանքով հնարավոր կորստի ռիսկն է: Երբ ներքին վերահսկողության համակարգը դադարում է գործել, գործառնական ռիսկերը կարող են վնաս հասցնել համբավին, ունենալ, իրավական հետևանքներ կամ հանգեցնել ֆինանսական վնասների: Ընկերությունը չի ենթադրում, որ բոլոր գործառնական ռիսկերը վերացված են, սակայն ներքին վերահսկողության համակարգի օգնությամբ և հնարավոր ռիսկերի որոշման և համապատասխան արձագանքի միջոցով Ընկերությունը կարող է կառավարել նման ռիսկերը: Ներքին վերահսկողության համակարգը նախատեսում է պարտավորությունների արդյունավետ տարանջատում, մուտքի թույլտվության, համադրման և հաստատման գործընթացներ, աշխատակազմի վերապատրաստում և գնահատում, այդ թվում՝ ներքին աուդիտ:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկը ներառում է արժույթային, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսակիր և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձնահատուկ փոփոխությունների ազդեցությանը և շուկայական գների ու արտարժույթի փոխարժեքների փոփոխականության մակարդակի փոփոխություններին: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և հսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունը և պահպանել այն ընդունելի սահմանաչափերում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը: Ընկերությունը կառավարում է իր շուկայական ռիսկը՝ հեջավորելով դիրքերը:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկն առաջանում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքի փոփոխությունները ազդեցություն կունենան ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ իրական արժեքի վրա: Ստորև աղյուսակը ներկայացնում է 2024 և 2023թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների զգայունությունը (հաշվարկն իրականացվել է գործիքների տևողության հիման վրա)՝ տոկոսադրույքի հնարավոր փոփոխությունների նկատմամբ, մյուս բոլոր փոփոխականների՝ անփոփոխ մնալու պայմանով:

Արժույթ	Բազիսային կետերի աճ 2024թ.	Չուտ տոկոսային եկամտի զգայունություն 2024թ.	Սեփական կապիտալի զգայունություն 2024թ.
ՀՀ դրամ	1.00%	(539)	(2,105,978)
ԱՄՆ դոլար	1.00%	(236,560)	–
Եվրո	1.00%	(2,132)	–
Արժույթ	Բազիսային կետերի նվազում 2024թ.	Չուտ տոկոսային եկամտի զգայունություն 2024թ.	Սեփական կապիտալի զգայունություն 2024թ.
ՀՀ դրամ	1.00%	539	2,105,978
ԱՄՆ դոլար	1.00%	236,560	–
Եվրո	1.00%	2,132	–
Արժույթ	Բազիսային կետերի աճ 2023թ.	Չուտ տոկոսային եկամտի զգայունություն 2023թ.	Սեփական կապիտալի զգայունություն 2023թ.
ՀՀ դրամ	1.00%	–	(1,256,159)
ԱՄՆ դոլար	1.00%	(234,692)	–

(հազար ՀՀ դրամ)

24. Ռիսկերի կառավարում (շարունակություն)**բ) Պարտքային ռիսկ (շարունակություն)**

Արժույթ	Բազիսային կետերի նվազում 2023թ.	Չուտ տոկոսային եկամտի զգայունություն 2023թ.	Սեփական կապիտալի զգայունություն 2023թ.
ՀՀ դրամ	1.00%	–	1,256,159
ԱՄՆ դոլար	1.00%	234,692	–

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթային ռիսկն այն ռիսկն է, երբ ակտիվի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն արտարժույթի փոխարժեքի փոփոխության արդյունքում:

Ստորև աղյուսակը ներկայացնում է այն արժույթները, որոնց մասով Ընկերությունը ենթարկվում է ռիսկի 2024 և 2023թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իր դրամային ակտիվների և պարտավորությունների գծով: Այս վերլուծությունը հաշվարկում է ՀՀ դրամի նկատմամբ արտարժույթի փոխարժեքի ողջամտորեն հնարավոր շարժի ազդեցությունը, շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում այլ փոփոխականների հաստատուն մնալու դեպքում: Բացասական գումարն արտացոլում է հավանական զուտ նվազումը շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում, իսկ դրական գումարը՝ հավանական զուտ աճը:

Հազար ՀՀ դրամ Արժույթ	Արտարժույթի փոխարժեքի փոփոխություն % 2024թ.	Ազդեցություն միլիւն հարկումը շահույթի վրա 2024թ.	Արտարժույթի փոխարժեքի փոփոխություն % 2023թ.	Ազդեցություն միլիւն հարկումը շահույթի վրա 2023թ.
Եվրո	6.60%	19,226	10%	23,881
Եվրո	-3.17%	(9,234)	-10%	(23,881)
ԱՄՆ դոլար	3.40%	182,649	10%	142,724
ԱՄՆ դոլար	-3.84%	(206,286)	-10%	(142,724)
Ռուբլի	9.56%	20,205	10%	17,732
Ռուբլի	-21.45%	(45,335)	-10%	(17,732)

25. Իրական արժեքի չափում

Ընկերությունը տրամադրում է իր ակտիվների և պարտավորությունների վերլուծություն, որոնք սկզբնական ճանաչումից հետո չափվում են իրական արժեքով, խմբավորվում են մակարդակներ 1-ից 3-ում, հիմք ընդունելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանը: Մակարդակները ներկայացվում են ստորև՝

- ▶ Մակարդակ 1 – նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկայում գնանշվող գները (չճշգրտված);
- ▶ Մակարդակ 2 – մակարդակ 1-ում նշված գներից տարբերվող ելակետային տվյալները, որոնք ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող) դիտարկելի են ակտիվների կամ պարտավորությունների գծով, և
- ▶ Մակարդակ 3 – ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

ա) Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները, ժամկետային ավանդները, հակադարձ հետգնման պայմանագրերով ստացման ենթակա գումարները, այլ ֆինանսական ակտիվները, հետգնման պայմանագրերով վճարման ենթակա գումարները և ֆինանսական կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նկատմամբ պարտավորությունները իրացվելի են կամ ունեն կարճ մարման ժամկետ (միջև երեք ամիս), հետևաբար, ենթադրվում է, որ հաշվեկշռային արժեքները մոտ են դրանց իրական արժեքներին:

Վարձակալության գծով պարտավորություններ

Վարձակալության գծով պարտավորությունների իրական արժեքը գնահատվում է՝ օգտագործելով զեղչված դրամական միջոցների հոսքերի մեթոդները՝ կիրառելով շուկայական տոկոսադրույքները, որոնք Ընկերությունը պետք է վճարեր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ նմանատիպ ժամկետներով և նմանատիպ ապահովվածությամբ փոխառություն ստանալու համար անհրաժեշտ միջոցները, որոնց արժեքը նման է օգտագործման իրավունքի ձևով ակտիվների արժեքին:

(հազար ՀՀ դրամ)

25. Իրական արժեքի չափում (շարունակություն)**բ) Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ****2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

Հազար ՀՀ դրամ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	1,405,266	5,991,716	–	7,396,982
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	–	43,433,432	–	43,433,432

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար ՀՀ դրամ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	–	9,957,126	–	9,957,126
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	–	27,199,950	–	27,199,950

ՀՀ պետական արժեթղթերը դասակարգվել են մակարդակ 2-ում, քանի որ դրանք գնահատվել են օգտագործելով զեղչված դրամական միջոցների հոսքերի մեթոդներն այն դրույքաչափով, որը արտացոլում է շուկայի մարման եկամտաբերությունը: Իրական արժեքի որոշման համար օգտագործվող գնահատման մեթոդներն ու տեխնիկաները չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատ:

ԱՄՆ կառավարության պետական արժեթղթերի իրական արժեքը գնահատվում է նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկայում գնանշվող գների օգտագործմամբ և դասակարգվում է մակարդակ 1-ում: Այլ երկրներում թողարկված կորպորատիվ արժեթղթերը և ֆոնդերի փայերը դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի մակարդակ 2-ում, քանի որ դրանք չափվում են ոչ ակտիվ շուկայում գնանշվող գներով:

Արտերկրում թողարկված արժեթղթերի իրական արժեքը դասակարգվում է մակարդակ 2-ում, ինչը հիմնված է միջազգային շուկայում գնանշված գների վրա, բացառությամբ որոշ արժեթղթերի, որոնք թողարկվել են հիմնականում ռուսական ընկերությունների կողմից, որոնք չափվում են հետագայում վաճառքի գնով, եթե այդպիսի գործարքը տեղի է ունեցել հաշվետու ամսաթվին մոտ, գնանշված գների բացակայության պատճառով և որոնք դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի մակարդակ 2-ում: Զանի որ արժեթղթերի վաճառքն իրականացվել է հաշվետու ամսաթվից հետո, ղեկավարությունը կարծում է, որ այս արժեթղթերի իրական արժեքը մոտ է վաճառքի գնին:

(հազար ՀՀ դրամ)

26. Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության վերլուծություն

Ստորև աղյուսակը ներկայացնում է ակտիվների և պարտավորությունների վերլուծությունը, կախված ակնկալվող փոխհատուցումից կամ մարումից: Ընկերության պայմանագրային չգեղչված մարումների պարտավորությունները ներկայացված են Ծան. 24-ում: Ռիսկերի կառավարում:

	2024թ.			2023թ.		
	Մեկ տարվա ընթացքում	Ավելի քան մեկ տարի	Ընդամենը	Մեկ տարվա ընթացքում	Ավելի քան մեկ տարի	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5,210,299	–	5,210,299	6,569,219	–	6,569,219
Հակադարձ հետզնման պայմանագրերով ստացման ենթակա գումարներ	950,334	–	950,334	–	–	–
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	7,396,982	–	7,396,982	9,957,126	–	9,957,126
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	43,433,432	–	43,433,432	27,199,950	–	27,199,950
Ներդրում ասոցիացված ընկերությունում	–	308,329	308,329	–	210,617	210,617
Ներդրում համատեղ ձեռնարկությունում	–	–	–	–	16,359	16,359
Հիմնական միջոցներ և ոչ սյուբական ակտիվներ	–	374,739	374,739	–	245,025	245,025
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	–	121,741	121,741	–	142,031	142,031
Այլ ակտիվներ	544,466	37,816	582,282	688,608	–	688,608
Ընդամենը	57,535,513	842,625	58,378,138	44,414,903	614,032	45,028,935
Հետզնման պայմանագրերով վճարման ենթակա գումարներ	37,710,716	–	37,710,716	23,854,597	–	23,854,597
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նկատմամբ	2,243,443	–	2,243,443	3,132,345	–	3,132,345
Պարտավորություններ վերջնահաշվարկ չանցած գործարքների մասով	855,247	–	855,247	3,930,608	–	3,930,608
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություններ	52,027	–	52,027	914,914	–	914,914
Վարձակալության գծով պարտավորություններ	51,660	99,051	150,711	15,444	116,711	132,155
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,949,810	–	1,949,810	2,265,301	–	2,265,301
Պահուստներ	–	–	–	–	27,677	27,677
Հետաձգված հարկային պարտավորություններ	–	359,406	359,406	–	8,412	8,412
Ընդամենը	42,862,903	458,457	43,321,360	34,113,209	152,800	34,266,009
Զուտ	14,672,610	384,168	15,056,778	10,301,694	461,232	10,762,926

Ընկերության ղեկավարությունը այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները և շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները համարում է իրացվելի ակտիվներ, որոնք Ընկերությունը կարող է փոխարկել դրամական միջոցների, հետևաբար, Ընկերությունը այս ակտիվները ներկայացրել է ժամկետայնության «մեկ տարվա ընթացքում» հոդվածում:

(հազար ՀՀ դրամ)

27. Կապիտալի կառավարում

Ընկերության կապիտալի կառավարման նպատակով կապիտալը ներառում է թողարկված կապիտալը, Ընկերության բաժնետերերին վերագրվող սեփական կապիտալի բոլոր այլ պահուստները և զուտ պարտքը: Չուտ պարտքը սահմանվում է որպես փոխառությունների և վարձակալության գծով պարտավորությունների հանրագումար՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները հանելուց հետո: Ընկերության կապիտալի կառավարման առաջնային նպատակն է առավելագույնի հասցնել բաժնետիրական արժեքը:

Ղեկավարությունը ձգտում է պահպանել կապիտալ բավարար մակարդակ Ընկերության գործառնական և ռազմավարական կարիքները բավարարելու և շուկայի մասնակիցների վստահությունը պահպանելու համար: Այն ձեռք է բերվում դրամական միջոցների արդյունավետ կառավարման միջոցով, Ընկերության հասույթի և շահույթի և երկարաժամկետ ներդրումային պլանների մշտադիտարկմամբ, որոնք հիմնականում ֆինանսավորվում են Ընկերության գործառնական դրամական հոսքերից: Այսպիսի միջոցառումներով Ընկերությունը ձգտում է հասնել շահույթի կայուն աճի: Կապիտալի կառավարման մասով Ընկերության մոտեցումը տարվա ընթացքում չի փոփոխվել:

ՀՀ Կենտրոնական բանկը Ընկերության համար սահմանում և վերահսկում է կապիտալի պահանջները: Ըստ ՀՀ ԿԲ կողմից սահմանված՝ ներկայումս գործող կապիտալի պահանջների՝ Ընկերությունը պետք է ապահովի 300,000 հազար ՀՀ դրամ նվազագույն բաժնետիրական կապիտալ (2023թ.՝ 300,000 հազար ՀՀ դրամ): 2024 և 2023թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը համապատասխանում է կապիտալի նվազագույն պահանջներին:

28. Պայմանական պարտավորություններ**ա) Ապահովագրություն**

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ծանագները հիմնականում դեռևս հասանելի չեն: Ընկերությունը չունի իր գործունեության դադարեցման, ինչպես նաև իր գույքի կամ գործունեության հետ կապված ապահովագրական դեպքերի ժամանակ առաջացող գույքի և շրջակա միջավայրի վնասի՝ երրորդ կողմի նկատմամբ պարտավորության ամբողջական ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ նշանակալի բացասական ազդեցություն Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

բ) Դատական վարույթներ

Ընկերությունը ներգրավված չի դատական վարույթներում, որոնք կարող են նշանակալի ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

գ) Հարկում

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

Տրանսֆերային գնագոյացման օրենսդրական դրույթներ

Ընկերությունը ենթակա է Հայաստանում տրանսֆերային գնագոյացման օրենսդրական պահանջներին, որոնք պահանջում են վերահսկվող գործարքների վերաբերյալ ծանուցման ներկայացում և վերահսկվող գործարքների վերաբերյալ տրանսֆերային գնագոյացման փաստաթղթերի պատրաստում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի: Թեև Ընկերությունը պարտավորվում է կատարել այս պահանջները, ներառյալ հարկային մարմինների պահանջով համապատասխան ծանուցման ներկայացումը և պատշաճ փաստաթղթերի վարումը, Հայաստանում գործող օրենսդրությունը և իրավակիրառման մեխանիզմները դեռևս մշակման վաղ փուլում են:

(հազար ՀՀ դրամ)

28. Պայմանական պարտավորություններ (շարունակություն)

գ) Հարկում (շարունակություն)

Արդյունքում, տրանսֆերային գնագոյացման կանոնների մեկնաբանման և գործնական կիրառման հարցում առկա է որոշակի անորոշություն: Թեև ղեկավարությունը կարծում է, որ Ընկերության կողմից հայտնաբերված վերահսկվող գործարքներն ամբողջական են և համապատասխանում են “անկախ կողմերի միջև գործարքի” սկզբունքին, հնարավոր է, որ հարկային մարմինները այլ տեսակետ ունենան: Եթե պետական լիազոր մարմինները կարողանան վիճարկել Ընկերության դիրքորոշումը տրանսֆերային գնագոյացման վերաբերյալ, դա կարող է հանգեցնել լրացուցիչ հարկային պարտավորությունների, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվությունների վրա:

29. Կապակցված կողմեր

Ընկերության կապակցված կողմեր են հանդիսանում բաժնետերերը, առանցքային ղեկավար անձնակազմը և Ընկերության ասոցիացված կազմակերպությունը:

2024 և 2023թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության խոշոր բաժնետերեր է հանդիսանում Արամ Կայֆաջյանը, ով նաև Ընկերության գլխավոր տնօրենն է: Արամ Կայֆաջյանի հետ գործարքները ներկայացված են «Առանցքային ղեկավար անձնակազմ» բաժնում ստորև:

Գործարքներ կապակցված կողմերի հետ

2024 և 2023թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը կապակցված կողմերի հետ իրականացրել է հետևյալ գործարքները և ունեցել է հետևյալ չմարված մնացորդները՝

	2024թ. դեկտեմբերի 31		
	Ոչ գործադիր բաժնետերեր	Առանցքային ղեկավար անձնակազմ	Այլ
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն			
Եկամուտ			
Միջևորդավճարների և այլ վճարների գծով եկամուտ	4,901	9,281	184
Չուտ առևտրային օգուտ	1,535	1,114	–
Այլ եկամուտ (ենթավարձակալություն)	–	–	3,924
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն			
Այլ ակտիվներ	820	513	429
2023թ. դեկտեմբերի 31			
	Առանցքային ղեկավար անձնակազմ		
	Ոչ գործադիր բաժնետերեր	Այլ	
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն			
Եկամուտ			
Միջևորդավճարների և այլ վճարների գծով եկամուտ	10,485	16,891	3,634
Այլ եկամուտ (ենթավարձակալություն)	–	–	3,924
Ծախսեր			
Վարչական և այլ ծախսեր	–	4,593	–
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն			
Այլ ակտիվներ	1,758	380	413

Տարվա համար առանցքային ղեկավար անձնակազմի վարձատրությունը կազմել է 1,966,448 հազար դրամ (2023թ.՝ 3,238,704 հազար դրամ):

**«ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

2024թ-ի ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

1. 2024թ-ի ընթացքում հետևողական աշխատանքներ են տարվել Ընկերության առջև դրված խնդիրների լուծման ուղղությամբ, որոնք տվել են իրենց արդյունքները:

Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարում: Նախորդող տարիների համեմատ 2024թ-ին ընկերության ներդրումային քաղաքականությունը նույնպես ակտիվ էր: Ընկերությունը շարունակել է ներդրումներ իրականացնել բարձր հուսալիությամբ ֆինանսական ակտիվներում, դրան գույքահեռ շարունակել է իրականացնել նաև ակտիվ առևտրային գործառնություններ միջազգային ֆինանսական շուկաներում՝ ապահովելով բավականին մեծ առևտրային եկամուտ:

Մատուցվող ծառայությունների որակի բարձրացում և համապատասխանեցում միջազգային չափանիշներին: Այս խնդրի լուծումը հատկապես կարևորվում էր Ընկերության նոր արտասահմանյան հաճախորդների մեծ թվով: Վերջիններս սովոր են աշխատել միջազգային չափանիշներով: Այդ պատճառով Ընկերությունը անընդհատ ուսումնասիրում է արտասահմանյան շուկաներում նմանատիպ ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից ծառայությունների մատուցման եղանակները՝ փորձելով ներդնել նրանց կուտակած փորձը իր կողմից ծառայությունների մատուցման ընթացքում: Դրա արդյունքում որոշակի փոփոխություններ են կատարվել Ընկերության ծառայությունների մատուցման ընթացակարգերում, մշակվել են հաճախորդներից տեղեկությունների պահանջման և հաշվետվությունների տրամադրման նոր ձևեր:

2024 թվականին Ընկերությունը սկսել է հաճախորդների սպասարկման օնլայն միջավայրի և բջջային հավելվածի մշակման աշխատանքները, որոնք զգալիորեն կհեշտացնեն հաճախորդների ներգրավման փուլում պատշաճ ուսումնասիրության, ինչպես նաև հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման պատվերների ստացման և հաճախորդներին հաշվետվությունների ներկայացման գործընթացները:

Հաճախորդների բազայի պահպանում և ընդլայնում: Ինչպես անցած տարի, այնպես էլ այս տարի շեշտադրումը հիմնականում դրվել է արտասահմանցի հաճախորդների վրա: Խնդրի լուծման նպատակով ներգրավվել են վաճառքի մենեջերներ և իրականացվել են մարկետինգային միջոցառումներ, որի արդյունքում հնարավոր է եղել ապահովել հաճախորդների թվի շարունակական աճ:

Ծառայությունների մատուցման ընթացակարգերի բարելավում: Քանի որ անընդհատ տեղի է ունենում տնտեսական և իրավական միջավայրի փոփոխություն, Ընկերության կողմից ընդունված ծառայությունների մատուցման ընթացակարգերը անընդհատ զգում են փոփոխման և բարելավման կարիք: Այս խնդրի լուծման նպատակով աշխատանքներ են տարվել այդ ընթացակարգերի թերությունները բացահայտելու ուղղությամբ և քայլեր են ձեռնարկվել դրանց վերացման համար: Մասնավորապես փոփոխություններ են կատարվել Ընկերության բրոքերային գործարքների կատարման ընթացակարգում, պահառության ծառայությունների մատուցման ընթացակարգում, հաճախորդների պատշաճ ուսումնասիրության և նույնականացման ընթացակարգերում և այլն:

Աշխատակիցների մասնագիտական մակարդակի կատարելագործում: Աշխատակազմի մասնագիտական մակարդակի բարձրացումը միշտ Ընկերության առջև դրված կարևորագույն խնդիրներից մեկն է: Ընկերությունը նպաստավոր պայմաններ է ստեղծում իր աշխատակիցների ինքնակրթության համար, միշտ խրախուսելով մասնագիտական մակարդակի բարձրացման ցանկացած ձգտում: Միաժամանակ Ընկերությունը գերծ չի մնում նաև աշխատակիցներին վերապատրաստման կուրսերի ուղարկելուց կամ այլ կազմակերպությունների ու երկրների համապատասխան մասնագետների հետ փոխանակման հնարավորություններ տրամադրելուց: Ընկերությունում պարբերաբար կազմակերպվում են քննարկումներ և դասընթացներ, այդ թվում նաև փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում աշխատակիցների գիտելիքների բարձրացման համար:

Նոր աշխատակիցների ներգրավում: Ընկերությունում պարբերաբար տեղի է ունենում աշխատակիցների արտահոսք, ինչի հետևանքով առաջանում է նոր աշխատակիցներ ներգրավելու անհրաժեշտություն: 2024թ-ի ընթացքում Ընկերության աշխատակիցների թիվը գրեթե մնացել է անփոփոխ՝ 59-ից դառնալով 57: Ընկերությունը ներգրավել է վաճառքի մասնագետներ, ներքին հաշվառման համակարգի մասնագետներ և մարքեթինգի մասնագետներ:

Ներքին հաշվառման համակարգի կատարելագործում: Այս խնդրի լուծումը հատկապես կարևորվում էր այն պատճառով, որ ճիշտ կազմակերպած և ավտոմատացված ներքին հաշվառումը հաճախորդների սպասարկման որակը և արագությունը բարձրացնող ամենակարևոր գործոններից մեկն է: 2024 թվականի ընթացքում Ընկերությունը անցում է կատարել ներքին հաշվառման նոր ծրագրի, որն իր մեջ ներառում է ընկերության գործունեության գրեթե բոլոր բնագավառները: Ընկերությունը նաև սկսել է ՀՕ բանկ հաշվապահական համակարգի ներդրման աշխատանքները, որոնք կավարտվեն 2025թ-ին:

Ընկերության գործունեության տեխնիկական պայմանների բարելավում: 2024թ-ի ընթացքում Ընկերությունն իր ծառայությունների մատուցման համար ձեռք է բերել համակարգչային և այլ հարակից սարքավորումներ:

Արտասահմանյան գործընկերների հետ նոր գործարար կապերի ստեղծում և հների ամրապնդում: 2024թ-ի ընթացքում Ընկերությունն անընդհատ բանակցություններ է վարել իր արտասահմանյան գործընկերների հետ՝ ձգտելով էլ ավելի ամրացնել նրանց հետ ունեցած գործարար կապերը: Ընկերությունը բանակցություններ է վարել նաև հնարավոր նոր գործընկերների հետ՝ փորձելով գործարար կապեր հաստատել նաև նրանց հետ: Դրա արդյունքում Ընկերությունը կարողացել է գործարար կապեր հաստատել մի շարք առաջատար ֆինանսական կազմակերպությունների հետ, ինչը հնարավորություն է տալիս մեծացնել հաճախորդների սպասարկման հնարավորությունները և նրանց առաջարկվող ֆինանսական գործիքների տեսականին:

Ընկերության ճանաչվածության աստիճանի բարձրացում: 2024թ-ի ընթացքում Ընկերության ճանաչվածության աստիճանի բարձրացման ուղղությամբ իրականացվել են մարքեթինգային միջոցառումներ, մասնավորապես սոցիալական ցանցերում տեղադրվել են ընկերության և ֆինանսական շուկայի վերաբերյալ տարաբնույթ հրապարակումներ:

Գործունեության նոր բնագավառներ մուտք գործելու հնարավորությունների բացահայտում և գնահատում: Հաշվի առնելով ՀՀ ֆինանսական շուկայում տեղի ունեցող զարգացումները՝ Ընկերության համար մեծ կարևորություն ունի Գործունեության նոր

բնագավառներ մուտք գործելու հնարավորությունների բացահայտումը և գնահատումը: Այդ կապակցությամբ Ընկերությունում մշտապես իրականացվում են տնտեսական և իրավական միջավայրերի հետազոտություններ, ինչպես նաև վարվում են բանակցություններ և քննարկումներ տարբեր գործընկերների և պաշտոնատար անձանց հետ: 2022-2024թթ.-ին տեղի ունեցած զարգացումները, մասնավորապես, լուրջ նախադրյալներ են ստեղծել արժեթղթերի փաթեթի կառավարման ծառայության ներդրման համար և Ընկերությունը պլանավորում է 2025թ.-ին ակսել այդ ծառայության մատուցումը:

2. Ընկերության ներքին միջավայրում տեղի ունեցած երևույթներն իրենց ազդեցությունն են ունեցել Ընկերության գործունեության վրա դրա բոլոր բնագավառներում: այդ ազդեցությունը դրսևորվել է հետևյալ առումներով.

ա) Ինչպես նախորդ տարի, այս տարի ևս Ընկերությունը չունեցավ լրացուցիչ կապիտալ ներգրավելու խնդիր: Ընկերության սեփական կապիտալը 2024թ-ի վերջում կազմեց 15.3 միլիարդ դրամ, նախորդ տարվա վերջի 10.9 միլիարդ դրամի փոխարեն: Վերոնշյալ աճը հիմնականում պայմանավորված էր ընկերության կուտակված շահույթի ավելացմամբ:

բ) 2024թ-ի ընթացքում Ընկերությունը մատուցել է հետևյալ ներդրումային հիմնական և ոչ հիմնական ծառայությունները.

- հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում, Ընկերության կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում,
- արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության տրամադրում հաճախորդներին,
- Ընկերության հաշվին և Ընկերության անունից արժեթղթերով գործարքների կատարում (այդ թվում որպես մարքեթ-մեյքեր),
- արժեթղթերի տեղաբաշխում,
- արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման հետ կապված ծառայությունների մատուցում,
- արժեթղթերի պահառություն,
- անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարում,
- արտարժույթով դիվերային և բրոքերային գործարքներ,
- խորհրդատվության տրամադրում ընկերություններին կապիտալի կառուցվածքի, կորպորատիվ ռազմավարության հարցերի վերաբերյալ, ընկերությունների վերակազմակերպման հետ կապված խորհրդատվական և այլ ծառայությունների մատուցում,
- արժեթղթերով գործարքների հետ կապված հետազոտությունների, ֆինանսական վերլուծությունների կազմում և տարածում:

Հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում, Ընկերության կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում: Ծառայության այս տեսակը Ընկերության համար հիմնական ծառայության տեսակ է եղել Ընկերության գործունեության ամենասկզբից: 2024թ-ի ընթացքում Ընկերությունը հաճախորդների հաշվին կատարել է 425.3 միլիարդ դրամի առքուվաճառքի գործարքներ՝ գերազանցելով պլանավորած ցուցանիշը մոտ 9 տոկոսով: Գործունեության այս տեսակից Ընկերության ստացած հասույթը կազմել է 4.2 միլիարդ դրամ:

Որպես այս ծառայության գծով հաճախորդներ 2024թ-ին, ինչպես և նախատեսված էր, հանդես են եկել ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձինք:

Արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության տրամադրում հաճախորդներին: Այս ծառայությանը հնարավոր չէ ծավալային գնահատական տալ: Ծառայության այս տեսակը սերտորեն առնչվում է նախորդի հետ: Շատ դեպքերում դրանք անբաժանելի են, այդ իսկ պատճառով որպես այս ծառայության հաճախորդներ կրկին դիտարկվում են ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձինք, այդ թվում ինստիտուցիոնալ ներդրողները: Ծառայության այս տեսակից ստացված հասույթը նույնպես հնարավոր չէ առանձնացնել, քանի որ Ընկերությունը սովորաբար այս ծառայության համար հաճախորդներից առանձին վճար չի գանձում, և այս ծառայության վճարը ներառվում է հաճախորդի հաշվին գործարքների կատարման միջնորդավճարի մեջ:

Ընկերության հաշվին և Ընկերության անունից արժեթղթերով գործարքների կատարում (այդ թվում որպես մարքեթ-մեյքեր): 2024թ-ին Ընկերությունն իր հաշվին և իր անունից արժեթղթերով կատարել է 2.4 տրիլիոն դրամի գործարք, որից 1.4 տրիլիոն դրամը՝ կորպորատիվ արժեթղթերով, իսկ 1 տրիլիոն դրամը՝ պետական: Կորպորատիվ արժեթղթերով կատարված գործարքների գերակշիռ մասը կազմել են առքուվաճառքի գործարքները: Գործունեության այս տեսակից Ընկերության զուտ եկամուտը 2024թ-ին կազմել է 5.4 միլիարդ դրամ: Չնայած այս ծառայության գծով ստացված փաստացի ցուցանիշները 54.8 տոկոսով գերազանցել են պլանավորվածները՝ ներկա մակրոտնտեսական իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ ապագայում այս ծավալները ենթակա են կրճատման:

Արժեթղթերի տեղաբաշխում: 2024թ-ի ընթացքում Ընկերությունը իրականացրեց 2 թողարկողի արժեթղթերի չերաշխավորված տեղաբաշխում, որի շրջանակներում տեղաբաշխվել են մոտ 5 միլիարդ ՀՀ դրամի պարտատոմսեր և բաժնետոմսեր: Գործունեության այս տեսակի գծով պլանավորված ցուցանիշները թերակատարվեցին 42 տոկոսով, սակայն այս գործունեության տեսակը չնչին մասնաբաժին է զբաղեցնում ընդհանուր ֆինանսական արդյունքում: Ապագա ակնկալվող ցուցանիշները էականորեն չեն փոփոխվել՝ հաշվի առնելով պոտենցիալ թողարկողների հետ արդեն իսկ առկա պայմանավորվածությունները:

Արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման հետ կապված ծառայությունների մատուցում: 2024թ-ին ևս Ընկերությունը Արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման հետ կապված ծառայությունների գծով հաճախորդ չունեցավ: Ընկերությունը այս գործունեության տեսակը չի դիտարկում որպես իր համար կարևորություն ունեցող և համագործակցում է այլ ընկերությունների հետ իր հաճախորդներին համապարփակ սպասարկում ապահովելու համար:

Արժեթղթերի պահառություն: 2024թ-ը աչքի ընկավ նաև Ընկերության պահառության ծառայությունից օգտվող հաճախորդների թվի աճով: 2024թ-ի համեմատ այդ թիվն աճել է 20 տոկոսով՝ հասնելով 550-ի: Այս թիվը ևս պայմանավորված էր արտաքին մակրոտնտեսական ազդեցության հետ կապված ֆինանսական հոսքերով:

Բացի այդ, Ընկերությունը այս ծառայությունը մատուցում է նաև որպես արժեթղթերի հաշվառման և հաշվարկային համակարգի հաշվի օպերատոր, որի շրջանակներում սպասարկում է 13,144 հաճախորդների՝ 46 տոկոսով ավելին քան 2023 թվականին:

Գործունեության այս տեսակից Ընկերության ստացված հասույթը 2024թ-ին կազմել է 1.6 միլիարդ դրամ, որն իր մեջ ներառում է արժեթղթերի և դեպո հաշիվների վարման դիմաց և այդ հաշիվներում առկա արժեթղթերով կատարված գործառնությունների (փոխանցում, գրավադրում և այլ) դիմաց ստացված հասույթը:

Գործունեության այս տեսակից ստացված փաստացի հասույթը էապես գերազանցեց պլանավորված ցուցանիշին, ինչը ստիպում է համապատասխան փոփոխություններ կատարել հետագա տարիների պլաններում:

Անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարում: 2024թ-ի վերջի դրությամբ Ընկերությունը սպասարկում էր 1,120 թողարկողների, ինչը 7 տոկոսով պակաս է նախորդ տարվա ցուցանիշից: Որպես այս ծառայության գծով հաճախորդներ հանդես են գալիս ռեզիդենտ իրավաբանական անձինք, որոնք ունեն թողարկված հասարակ և արտոնյալ բաժնետոմսեր, ինչպես նաև պարտատոմսեր և ներդրումային ֆոնդերի փայեր: Ծառայության այս տեսակից ստացված հասույթը 2024թ-ին կազմեց 171.8 միլիոն դրամ, որն իր մեջ ներառում է ռեեստրի վարումից, ինչպես նաև թողարկողների հանձնարարականներով տարբեր գործառնությունների կատարումից ստացված հասույթը: Գործունեության այս տեսակից ստացված փաստացի հասույթը մոտ 40 տոկոսով գերազանցել է պլանավորված ցուցանիշը:

Արտարժույթով դիլերային և բրոքերային գործարքներ: Ընկերությունը 2024թ-ին իրականացրել է 74.1 միլիարդ դրամի արտարժույթային դիլերային գործարքներ: 2024թ-ի վերջի դրությամբ Ընկերության արտարժույթային երկար դիրքը կազմել է 5.9 միլիարդ դրամ, արտարժույթի առքուվաճառքից զուտ օգուտը կազմել է 193 միլիոն դրամ, իսկ արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ վնասը կազմել է 355 միլիոն դրամ: Ընկերությունը կատարել է նաև 293.7 միլիարդ դրամի արտարժույթով բրոքերային գործարքներ, ինչը գրեթե 18 տոկոսով գերազանցել է պլանավորված ցուցանիշը:

Խորհրդատվության տրամադրում ընկերություններին կապիտալի կառուցվածքի, կորպորատիվ ռազմավարության հարցերի վերաբերյալ, ընկերությունների վերակազմակերպման հետ կապված խորհրդատվական և այլ ծառայությունների մատուցում: Այս ծառայության գծով Ընկերությունը ունի մեկ հաճախորդի հետ կնքված երկարաժամկետ պայմանագիր, որով վերջինիս անընդհատ խորհրդատվություն է մատուցում: Այս ծառայությունից ստացված հասույթը 2024թ-ին կազմել է 1,800.00 հազար դրամ, ինչը պլանավորվածին համահունչ ցուցանիշ է:

Արժեթղթերով գործարքների հետ կապված հետազոտությունների, ֆինանսական վերլուծությունների կազմում և տարածում: Ընկերությունը պարբերաբար իր հաճախորդներին տրամադրում է Հայաստանի կապիտալի շուկայի վերաբերյալ տեղեկատվական նյութ, որում արտացոլվում են շուկայում տեղի ունեցած բոլոր փոփոխությունները: Այս ծառայությունը մատուցվում է որպես հաճախորդների որակյալ սպասարկման անբաժանելի մաս, որի դիմաց հաճախորդներից վճար չի գանձվում:

զ) Ընկերության 2024թ-ի հասույթը կազմել է 16.0 միլիարդ դրամ, ինչը մոտ է եղել կանխատեսված 14 միլիարդին: Հասույթի 3.9 միլիարդ դրամը տոկոսային եկամուտն է, իսկ 12.1 միլիարդ դրամը՝ ոչ տոկոսային եկամուտը, որը ներառում է նաև Ընկերության կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտը: Ընկերության ծախսերը կազմել են 11.3 միլիարդ դրամ, որից տոկոսային ծախսերը կազմել են 2.5 միլիարդ դրամ, իսկ ոչ տոկոսային ծախսերը՝ 8.8 միլիարդ դրամ: Ընկերության շահույթը հարկումից հետո կազմել է 3.9 միլիարդ

դրամ: Ընկերության կառավարման տնտեսական ակտիվության գործակիցը կազմել է 0.32, շահութաբերությունն ըստ ակտիվների՝ 0.06, շահութաբերությունն ըստ կապիտալի՝ 0.25:

դ) 2024թ-ի ընթացքում Ընկերությունը սպասարկել է թվով 15,609 հաճախորդների: Դրանցից 788-ը օգտվել են իրենց հաշվին և իրենց կամ Ընկերության անունից արժեթղթերով գործարքներ կատարելու ծառայությունից, 4-ը օգտվել են խորհրդատվական ծառայություններից, 3-ը օգտվել են մարքեթ մեյքերի ծառայությունից, 1,120-ը օգտվել են անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման ծառայությունից, 13,694-ը օգտվել են արժեթղթերի պահառության ծառայությունից: Ընդհանուր առմամբ Ընկերության հաճախորդների թիվը նախորդ տարվա համեմատ զգալի աճել է:

ե) Ընկերության կառավարման համակարգը լիարժեքորեն բավարարում է ներկա պահին Ընկերության գործունեության բոլոր բանգավառները արդյունավետ կառավարելու և վերահսկելու համար:

եա) Ընկերության կորպորատիվ կառավարման մեխանիզմը հստակեցված է Ընկերության կանոնադրությունում: Ընկերությունում տնօրենների խորհուրդ չի ձևավորվել, ինչը որոշակի բարդություններ է ստեղծում նոր ներքին իրավական ակտերի ընդունման գործընթացում, քանի որ Ընկերությունը բաժնետերեր ունի բազմաթիվ երկրներից, որոնց ներկայությամբ բաժնետերերի ժողով հրավիրելը կապված է որոշակի բարդությունների հետ: Այդ կապակցությամբ չի բացառվում, որ մոտ ապագայում Ընկերությունում ձևավորվի նաև տնօրենների խորհուրդ:

եբ) Ընկերությունում գործում է նաև ներքին աուդիտի ստորաբաժանումը, որը վերահսկում է Ընկերության գործունեության բոլոր բնագավառները: Այդ ստորաբաժանումը, բացի Ընկերության գործունեության անընդհատ մոնիտորինգից, ամեն ամիս իրականացնում է նաև Ընկերության գործունեության ստուգում և բացահայտված ցանկացած խախտման կամ թերացման մասին տեղեկություն է ներկայացնում Ընկերության գործադիր մարմնին, Կենտրոնական բանկին, ինչպես նաև կարգավորվող շուկայի օպերատորին և հաշվարկային համակարգի օպերատորին: Միաժամանակ ստորաբաժանումը նաև տարեկան հաշվետվություն է ներկայացնում Ընկերության կառավարման բարձրագույն մարմնին՝ բաժնետերերի ընդհանուր ժողովին:

եգ) 2024թ-ին Ընկերության համար առավել կարևոր են եղել հետևյալ ռիսկերը.

- վարկային ռիսկ. գործընկերոջ կողմից իր ստանձնած պարտավորությունները (այդ թվում թողարկած արժեթղթերի գծով) ժամանակին և լրիվությամբ չկատարելու ռիսկն է, որը գնահատվում է պարտքի և տոկոսային վճարումների ընդհանուր գումարով,
- ֆոնդային ռիսկ. ֆոնդային շուկայում անբարենպաստ փոփոխությունների ռիսկն է, որն իր մեջ ներառում է արժեթղթերի գների փոփոխության, արժեթղթերի գների տատանողականության փոփոխության, տարբեր արժեթղթերի և ինդեքսների միջև գնային հարաբերակցության փոփոխության ռիսկերը,
- տոկոսային ռիսկ. փոխառու կապիտալի շուկայում անբարենպաստ փոփոխությունների ռիսկն է, որն իր մեջ ներառում է տոկոսադրույքների փոփոխության, եկամտաբերության կորի տեսքի փոփոխության, տոկոսադրույքների տատանողականության փոփոխության, տարբեր տոկոսադրույքների միջև հարաբերակցության փոփոխության ռիսկերը,

- արժույթային ռիսկ. արժույթային փոխարժեքի անբարենպաստ փոփոխության ռիսկն է, որն իր մեջ ներառում է փոխարժեքների տատանողականության փոփոխության, տարբեր փոխարժեքների միջև հարաբերակցության փոփոխության ռիսկերը,
- իրացվելիության ռիսկ.
 - շուկայական իրացվելիության ռիսկ. շուկայում ընդհանուր իրացվելիության պակասի ռիսկն է, որի դեպքում կարող է հնարավոր չլինել արագ և արդյունավետ ձևով փակել բացված դիրքերը և ստանալ դրամական միջոցներ,
 - ներքին իրացվելիության ռիսկ. իրացվելիության գործակիցների նվազագույն մակարդակ ապահովելու հնարավորության բացակայության ռիսկ կամ այլ խոսքերով այն ռիսկը, որ Հնկերության իրացվելի ակտիվները չեն բավականացնի Հնկերության պարտավորությունները կատարելու համար,
 - բանկերի իրացվելիության ռիսկ. Հայաստանի բանկային համակարգում իրացվելի միջոցների պակասի ռիսկն է, որն ի հայտ է գալիս ռեպո գործարքների կնքման դեպքում:
- պորտֆելի կոնցենտրացիայի ռիսկ.
 - գործիքի կոնցենտրացիայի ռիսկ. պորտֆելում մեկ գործիքի գծով վնասաբեր դիրքերի կոնցենտրացիայի ռիսկն է,
 - գործարքի կոնցենտրացիայի ռիսկ. մեկ տեսակի գործարքի գծով վնասաբեր դիրքերի կոնցենտրացիայի ռիսկն է,
 - տնտեսական հատվածի ռիսկ. տնտեսության առանձին հատվածում (առանձին տարածաշրջանում կամ երկրում) գրաված վնասաբեր դիրքերի կոնցենտրացիայի ռիսկն է,
- գործառնական ռիսկ. գործառնությունների կատարման ընթացքում հնարավոր սխալների ռիսկը, որն իր մեջ ներառում է գործարքների կնքման ընթացքում սխալների, գործարքների քլիրինգի և վերջնահաշվարկի իրականացման հետ կապված սխալների, սպասարկող բանկերի կողմից փոխանցումների կատարման հետ կապված սխալների, Հնկերությունում և գործընկերների մոտ տեխնիկական համակարգերի խափանումների հետ կապված ռիսկը,
- պատվերների չկատարման ռիսկ. հաճախորդների պատվերները կատարելու հնարավորության բացակայության ռիսկ՝ կապված շուկայում առաջարկի կամ պահանջարկի բացակայության հետ,
- իրավական ռիսկ. իրավական դաշտում անբարենպաստ փոփոխությունների ի հայտ գալու ռիսկ,
- տրամադրված խորհրդատվության բացասական հետևանքների առաջացման ռիսկ. Հնկերության կողմից տրամադրված խորհրդատվության արդյունքում հաճախորդների կատարած քայլերի բացասական հետևանքներ ի հայտ գալու ռիսկ,
- թերտեղաբաշխման ռիսկ. տեղաբաշխման գործունեության իրականացման հետ կապված ռիսկն է, որը դրսևորվում է նախապես սահմանված տեղաբաշխման ենթակա արժեթղթերը լրիվ ծավալով տեղաբաշխելու հնարավորության բացակայությամբ,
- հաճախորդի ներդրումային քաղաքականության փոփոխության ռիսկ. հաճախորդների կողմից Հնկերության միջոցով կատարվելիք ներդրումների նախատեսված ծավալները կրճատվելու ռիսկ,

- գործարար համբավի կորստի ռիսկ. շուկայում հեղինակության անկման պատճառով կորուստներ կրելու ռիսկ,
- քաղաքական ռիսկ. երկրի քաղաքական համակարգում ցնցումների հետևանքով վնասներ կրելու ռիսկ,
- դժբախտ պատահարների ռիսկ. երկրաշարժի, համաճարակի, պատերազմի, հրդեհի, կողոպուտի և այլ դժբախտ պատահարների հետևանքով կորուստներ կրելու ռիսկ:
- տեղեկատվական համակարգի ռիսկ. Համակարգիչների խափանման, համակարգչային ցանցի խափանման կամ ցանցի վրա կատարված հարձակումների հետևանքով տեղեկատվության կորստի կամ արտահոսքի ռիսկն է:

Վերը նշված ռիսկերի գնահատման և դրանց զսպման նպատակով Ընկերության ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը և գլխավոր տնօրենը համատեղ մշակել են Ընկերության գործունեության տնտեսական նորմատիվներ և դրանց հաշվարկման մեթոդոլոգիա: Այդ նորմատիվները հաշվարկվում են օրական և ամսական կտրվածքներով և դրանց խախտման դեպքում միջոցառումներ են ձեռնարկվում այդ խախտումները վերացնելու ուղղությամբ:

զ) Ընկերությունը առանձնացված ստորաբաժանումներ չունի և 2024թ-ի ընթացքում չի բացել, ինչը լիովին համապատասխանում է Ընկերության գործարար ծրագրին:

է) Ընկերությունը 2024թ-ի վերջի դրությամբ ունի 57 աշխատակից, որոնցից շատերը ունեն ֆինանսական համակարգում երկարամյա աշխատանքային փորձ և որակավորումներ, այդ թվում 6-ը՝ արտասահմանյան ֆինանսական շուկաներում երկարամյա աշխատանքային փորձ: 2024թ-ի ընթացքում մի քանի անգամ կազմակերպվել են կոլեկտիվի հավաքներ, որոնց նպատակն է եղել Ընկերությունում առկա խնդիրների վերհանումը, ինչպես նաև աշխատակիցների միջև փորձի փոխանակումը: Ընկերությունը աշխատակիցների մոտ Ընկերության նկատմամբ նվիրվածությունը բարձրացնելու նպատակով կիրառել է նաև պարգևատրման մեխանիզմներ:

ը) 2024թ-ի ընթացքում Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների ցանկում և ծառայությունների մատուցման մեխանիզմներում նորամուծություններ չեն եղել: Ընկերությունը ստացել է արժեթղթերի փաթեթի կառավարման լիցենզիա, սակայն 2024թ-ի ընթացքում չի մատուցել այդ ծառայությունը:

թ) Ընկերության կողմից 2024թ-ի ընթացքում իրականացվել են մի շարք մարկետինգային միջոցառումներ: Մասնավորապես պոտենցյալ հաճախորդներին տրամադրվել են Ընկերության ծառայությունները ներկայացնող թերթիկներ, Ընկերությունն ակտիվորեն մասնակցել է միջազգային ֆինանսական համաժողովների և հանդես եկել որպես հովանավոր, Ընկերության աշխատակիցներն Ընկերության մատուցած ծառայությունները և դրանց պայմանները ներկայացրել են հեռախոսազանգերի և անհատական շփումների միջոցով, Ընկերության գործունեության վերաբերյալ նյութեր են հրապարակվել Ընկերության կայքում և ֆեյսբուքյան էջում: Հաճախորդների ներգրավման նպատակով Ընկերությունում նաև ներգրավված են եղել երեք վաճառքի մասնագետներ:

3. Արտաքին միջավայրում տեղի ունեցած երևույթները ունեցել են իրենց ազդեցությունը Ընկերության քաղաքականության և նրա գործունեության արդյունքների վրա: Այդ ազդեցությունը դրսևորվել է հետևյալ առումներով.

ա) Իչպես նախորդ տարի՝ 2024թ-ին նույնպես միջազգային շուկաներում տեղի ունեցող տատանումները Ընկերության գործունեության արդյունքների վրա էական ազդեցություն են ունեցել: Դա հիմնական մասով պայմանավորված է եղել արտաքին մակրոտնտեսական ազդեցությամբ:

բ) 2024թ-ին ՀՀ-ում տնտեսական ակտիվության բարձր մակարդակը պահպանվեց, որի արդյունքում տնտեսական ակտիվության գործակիցը նախորդ տարվա համեմատ կազմեց 108.0%: Դա որոշակի աշխուժություն մտցրեց թողարկողների և ներդրողների շրջանում: Դրան զուգահեռ առկա էր նաև գնաճի ոչ բարձր մակարդակ, ինչը դրական նախադրյալներ ստեղծեց Կենտրոնական բանկի կողմից խթանող դրամավարկային քաղաքականության իրականացման համար: Այդ բոլոր գործոնները համատեղ իրենց դրական ազդեցությունը թողեցին Ընկերության գործունեության ցուցանիշների վրա:

գ) 2024 թվականի ընթացքում ՀՀ Կենտրոնական բանկը շարունակեց խթանող դրամավարկային քաղաքականության իրականացումը՝ մի քանի անգամ իջեցնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը: Դա դրական կերպով անդրադարձավ Ընկերության գործունեության արդյունքների վրա, քանի որ հանգեցրեց ռեպո տոկոսադրույքների իջեցման, ինչպես նաև պարտատոմսերի գների աճին: Բացի այդ, տոկոսադրույքների իջեցումը նպաստեց Ընկերության կողմից ներգրավված փոխառու միջոցների սպասարկման ծախսերի կրճատմանը:

Ինչ վերաբերում է ներդրումային ծառայությունների մատուցման ոլորտի մրցակցությանը, ապա այն շարունակեց մեծ մնալ, շնորհիվ այն բանի, որ մի շարք բանկեր և նոր ներդրումային ընկերություններ արդեն մուտք են գործել շուկա և ակտիվորեն առաջարկում են իրենց ներդրումային ծառայությունները: Այս միտումը վկայում է Հայաստանում ներդրումային ծառայությունների շուկայի զարգացման և ընդլայնման մասին: Ընդ որում բանկերը, լինելով ֆինանսապես ավելի խոշոր կառույցներ, ավելի հեշտ են կարողանում ներգրավել պոտենցիալ հաճախորդներին:

դ) Հայաստանի արժեթղթերի շուկան կարգավորող իրավական դաշտը 2024թ-ին էապես չի փոփոխվել և օրենսդրական դաշտում տեղի ունեցած փոփոխությունները էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության գործունեության վրա: Այնուամենայնիվ, Ընկերությունը շարունակում է ուշադիր հետևել օրենսդրական փոփոխություններին և պատրաստ է անհրաժեշտության դեպքում հարմարեցնել իր գործունեությունը նոր պահանջներին:

Ընդհանուր առմամբ, պետք է նշել, որ 2024 թվականին արտաքին և ներքին գործոնների ազդեցությունը Ընկերության գործունեության վրա եղել է կանխատեսվածից ավելի բարենպաստ:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Ընկերության գործունեության ուսումնասիրության արդյունքում բացահայտվել է, որ «ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ-ն ունի հետևյալ ուժեղ կողմերը:

1. Ընկերությունը շուկայում գործում է 25 տարուց ավել և ֆինանսական շուկայում ունի բարի համբավ,
2. Ընկերությունը մատուցում է ծառայությունների լայն տեսականի, որոնցից շատերի գծով շուկայում ունի գերակշռող դիրք,
3. Ընկերության կոլեկտիվը համալրված է երիտասարդ, միևնույն ժամանակ, փորձառու և բարձր որակավորված աշխատակիցներով,
4. Ընկերությունն ունի հավատարիմ հաճախորդների լայն շրջանակ, այդ թվում ոչ ռեզիդենտներ և ինստիտուցիոնալ ներդրողներ,
5. Ընկերությունն ունի միջազգային գործընկերների լայն շրջանակ,
6. Ընկերությունն իր հաճախորդների հետ աշխատելիս ցուցաբերում է բարձր ձկունություն և անհատական մոտեցում,
7. Ընկերությունում լայնորեն կիրառվում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը, ինչը էապես մեծացնում է հաճախորդների սպասարկման արդյունավետությունը,
8. Ընկերությունը Հայաստանի արժեթղթերի շուկայում գործունեություն ծավալող ներդրումային ընկերությունների շարքում ամենամեծ սեփական կապիտալը ունեցող ընկերությունն է:

«ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ գլխավոր տնօրեն

25/04/2025թ.



Ա. Կալֆաջյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույնով հայտարարում ենք, որ պատասխանատվություն ենք կրում.

1. ընկերության ֆինանսական վիճակը (բոլոր էական առումներով) արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման համար, այն է՝
 - ա. հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար,
 - բ. հիմնավորված գնահատումներ, հաշվարկներ կատարելու համար,
 - գ. ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջների պահպանման, իսկ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից շեղումների դեպքում՝ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում այդ շեղումների բացահայտման համար,
 - դ. հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար,
 - ե. ֆինանսական հաշվետվությունները ընկերության գործունեության անընդհատության հիման վրա պատրաստելու համար,
2. ընկերության ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվություն ապահովող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխանող հաշվապահական հաշվառման գործուն համակարգի ներդրման համար,
3. ընկերության ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ՝ մեր իրավասությունների սահմաններում, միջոցներ ձեռնարկելու համար

Հավաստիացնում ենք, որ ընկերության ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ ակտերին:

«ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ

գլխավոր տնօրեն



Արամ Կայֆաջյան

գլխավոր հաշվապահ



Լիդա Թադեոսյան

25.04.2025թ.

